Տիպ

Ծղրիտի յաւերժած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 38 կիրակի 4 հոկտեմբերի | իններորդ տարի 1898

Պատերազմի դաշտում

ԽՈՍՏՈՎԱՆՈՒՆ

(Դի դը Մոպասանից)

Մարգարիտա դը Տերելը մահամերձ պառկած էր: Չընայած որ 6 տարեկան էր նա, բայց տեսքից աւելի մեծի՝ 75 տարեկանի էր նման: Նա գունատ էր քաթանի պէս. դէմքը չղաձգուելիութենից խեղաճ, հայեացքն անշարժ. սոսկալի սարսուռից դողդողալով՝ նա շնչում էր ընդհատ-ընդհատ. նրա առաջը կարծես մի ինչ որ սարսափելի բան կար: Մեռնողի քոյրը, տաս տարով մեծ Սուսաննան՝ ոտի վրայ մահճակալի առաջ հեկեկում էր: Հէնց այնտեղ անձեռոցիկով ծածկած փոքրիկ սեղանի վրայ երկու վառ մոմեր սպասում էին քահանային, որը հիւանդին պէտք է օծէր և հաղորդէր: Բոլոր սարք ու կարգը սենեակում այն անյոյս տեսքն ունէր, որ միշտ լինում է մեռնողների մօտ, այն էլ մարդկանց հետ վերջին՝ յաւիտենական բաժանումից առաջ: Սեղանների վրայ փոքրիկ շշեր էին ցցած. անկիւններում թափթփած էին սպիտակեղէններ, որոնք հրած էին ոտքով կամ աւելով: Թուում էր, թէ սենեակում սոսկալի մահը, մի ինչ որ տեղ թագնուած, սպասում էր լոպէին:

Երկու քոյրերի պատմութիւնը շատ սրտաշարժ էր: Նրան ճանաչում էին հեռու շրջակայքում և քչերը չէին նրա վրայ արցունք թափել:

Մի ժամանակ մեծ քոյր Սուսաննան սիրում էր մի ջահել տղամարդու, որ փոխադարձաբար նոյնպէս սիրում էր նրան: Նրանք արդէն իրար բացւել, միայն սպասում էին պատկի օրուան, որ յանկարծակի մեռաւ ամուսին չէնրիկ դը Սամպիէրը: Սարսափելի էր ջահել տղջկայ յուսահատութիւնը. նա երդուեց որ երբէք չ'ամուսնանայ և ճիշտ ու հաստատ մնաց իր խօսքին: Նա որբևայրիի շոր հագաւ և այլևս չըհանեց:

Նրա փոքր քոյր Մարգարիտը, որ այդ ժամանակ հազիւ լինէր 12 տարեկան, մի առաւօտ հիւանդ քրոջ մօտ, ընկաւ վզովը և ասաց. «Մեծ քոյրս, ես չեմ ուզում որ դու դժբախտ մնաս. ես չեմ ուզում որ դու լացես ամբողջ կեանքդ. ես քեզանից երբէք չեմ բաժանուիլ. ես մարդու չեմ գնալ և յաւիտեան քո մօտ կըմնամ»:

Մանկական այդ անձնազոհութիւնը յուզեց Սուսաննային. նա համբուրեց քրոջը, բայց չըհաւատաց նրա ասածին: Վերջը մանուկը հաստատ մնաց տատ ոգուքին և չընայած ծնողների աղաչանքներին ու մեծ քրոջ պատատանքներին, նա դարձեալ մարդու չըգնաց: Մինչդեռ Մարգարիտը սիրուն էր. նա մերժեց շատ ջահէլների, որոնք ըստ երևոյթին սիրում էին նրան և. ընդ միշտ մնաց քրոջ մօտ:

Քոյրերը իրանց ամբողջ կեանքում ոչ մի անդամ չըբաժանուեցին: Իրարից անբաժան՝ նրանք մանէին գալիս միասին: Բայց Մարգարիտը երևում էր մշտապէս տխուր, մաշած, և աւելի շատ մտածկոտ, քան մեծ քոյրը: Նրա արած զոհաբերութիւնը փշրեց նրան: Նա վաղ պառաւեց. մազերը երեսուն տարեկան հասակում սպիտակեցին, և յաճախ հիւանդանալով՝ կարծես տանջւում էր անվերջ ցաւից, որը շարունակ հալում էր նրան:

Այժմ առաջ ինքն էր մեռնողը: Արդէն օր ու գիշեր էր, որ խօսք անգամ չէր արտասանել. միայն լուսաբացին նա ասել էր. «Կանչեցէք քահանային, վերջս հասել է»: Ապա ընկել էր բարձին. ահով լի աչքերը յառել էր առաջ ու շրթունքները սկսել էր շարժել, կարծես տանջելիս լինէր ինչ որ ահեղ բառերից, որոնց արտասանելու ուժ չէր ունենալ: Իսկ մեծ քոյրն ընկած նրա անկողնին, հեկեկալով լացում էր հետն էլ կրկնում.

—Մարգոս, իմ խեղճ Մարգոս. իմ մանկիկս!

Մարգարտին Սուսաննան միշտ անուանում էր «մանուկ», ինչպէս նա նրան՝ «մեծ քոյր»:

Սանդուղքի վրայ լսեցին ոտնաձայներ: Դուռը բացւեց և ներս մտաւ սենեակը տիրացուն՝ առաջնորդելով զգեստաւորուած քահանային: Հէնց որ մեռնողը քահանային տեսաւ, ամբողջ ուժով բարձրացաւ անկողնից, բերանը բացեց, մի քանի խօսք շշնջաց և յանկարծ սկսեց եղունդները կրծոտել:

Այդ ժամանակ աբբայ Սիմոնը մօտեցաւ անկողնին, բռնեց Մարգարիտի ձեռքը, համբուրեց նրա ճակատը և ցած ձայնով ասաց.

—Աստուած թողութիւն տայ, որդեակս: Եղիր աւելի համարձակ. այժմ, երբ հասել է ժամը, խօսիր անկեղծ:

Ամբողջ մարմնով ցնցւելով և շարժելով անկողինը, հազիւ լսելի ձայնով խօսեց Մարգարիտը.

— Նստիր, մեծ քոյրս, և լսիր:

Քահանան թեքւեց դէպի Սուսաննան, որը պեռփուած էր անկողնին, բարձրացրեց նրան, նստեցրեց բազկաթոռի մէջ, երկու քոյրերի էլ ձեռքը բռնեց և ասաց.

—Տէր, ուժ տուր սրանց. ուղարկիր սրանց վերայ քո դթութիւնը:

Այստեղ Մարգարիտը յանկարծ խօսել սկսեց. խօսքերը մէկը միւսի ետևից դժւարութեամբ էին

դուրս գալիս. և դրանք նման էին մի ինչ որ խրոխտ, խեղդւած, թոյլ հնչիւններին...

—

—Ներիր, ներիր ինձ, մեծ քոյրս. ինձ ներիր... Օ՜, եթէ իմանայիր դու, թէ ինչպէս ամբողջ կեանքումս ատելացել եմ այս բոպէից...

—Ներելու ինչ ունիմ, մանկիկս. չէ որ բոլորը՝ ինչ ունէիր՝ ինձ տւիր. ամեն բան զոհեցիր ինձ համար, հրեշտակս. արտասուքը մշտ աչքերին շշնջում էր Սուսաննան:

—Լռիր, լռիր... թոյլ տուր խօսեմ. ինձ մի ընդհատիր, սարսափելի է այդ... թող պատմեմ բոլորը... մինչև վերջը: Մի շարժւիլ. լսիր... դու չիշում ես... դու չիշում ես... հէնրիխը...

Սուսաննան ցնցւեց և աչքերը յառեց քոյրը: Նա շարունակեց.

—Դո՞ պէտք է բոլորը լսես, որ հասկանաս: Ես 12 տարեկան էի, միայն 12 տարեկան. չէ որ դու այդ լաւ ես չիշում. չէ՞: Բայց ես արդէն հոգով փչացած էի և ամենը ինչ որ սիրտս տալիս էր, անում էի... Դու չիշում ես ինչպէս ինձ երես էին տալիս... լռիր մի... Առաջին անգամ երբ նա մեզ մօտ էր, նա հագին ունէր փայլուն կօշիկներ. նա ձիւց իջաւ դռան առաջ և ներողութիւն խնդրեց հագուստի համար. բայց նրան անհրաժեշտ էր հօրս մի ինչ որ նորութիւն յայտնել: Դու այդ չիշում ես, այնպէս չէ՞... Ոչինչ մի ասիլ. լսիր... Երբ նրան ես տեսայ, գմայլեցի նրա գեղեցկութեամբ. իսկ յետոյ ամբողջ ժամանակ պահլիճի մէջ, կանգնած էի անկիւնում, քանի որ նա խօսում էր հօրս հետ: Տարօրինակ են երեխաները... և ոսկալի... Օ՜, այո՛, ես երազում էի նրան... Նա յաճախակի սկսեց երևալ... Ես նրան կլանում էի աչքերով, հոգով... Այն ժամանակ ես տարիքիցս աւելի մեծ էի. դրա համար էլ աւելի էի խորամանկ, քան կարծում էին: Նա շատ-շատ էր գալիս... և ես միայն նրա մասին էի մտածում. «Հէնրիխ, Հէնրիխ Սամպիէր». շշնջում էի ես:

«Յետոյ լուր տարածւեց յանկարծ, որ նա ամուսնանալու է քեզ վրայ: Դա ինձ համար յաւէրժ էր... Օ՜, մեծ քոյրս, շատ մեծ յաւէրժ... Ամբողջ երեք օր ես չկարողացայ քնել, միշտ լացում էի. իսկ նա շարունակում էր յաճախել ամեն օր, կէս օրին, ընթրելուց յետոյ... Չէ որ դու այդ չիշում ես, այնպէս չէ՞... Մի խօսիլ, լսիր: Նրա համար կաթից ու իւղից դու պատրաստում էիր նրա սիրած խմորեղէնը... Օ՜, ինչպէս ես չիշում եմ այդ բոլորը: Ես այժմ էլ կը-պատրաստեմ, եթէ կարիք լինէր: Նա խմորեղէնը կուլ էր տալիս միանգամից և վրան էլ խմում էր մի բաժակ գինի... իսկ յետոյ աւելացնում էր՝ «Հրաշալի է»: Յիշում ես դու, ինչպէս էր նա այդ ասում:

«Ես խանդոտում էի, այո, ես խանդոտում էի!... Պասկիզ օրը մօտենում էր. արդէն մնացել էր ոչ աւելի քան երկու շաբաթ: Ես խելքս կորցրել էի: «Նա Սուսաննայի հետ չըպէտք է պսակւի, ասում էի ինքս ինձ, «ոչ, ես այդ չեմ ցանկանում»: Նա պիտի ինձ հետ ամուսնանայ, երբ ես կրմեծանամ: Ես երբէք չեմ պատահել մէկին, որին այնպէս բուռն սիրէի: Եւ ահա մի երեկոյ, պսակի արարողութիւնից տաս օր առաջ, դու դբօսնում էիր նրա հետ ամբողջ մօտերքը լուսնի լուսով... Եւ այնտեղ... Թղկենու տակ... նա քեզ իր գրկումն ունէր... երկար... Չէ՞ որ դու այդ չիշում ես, այնպէս չէ՞... Այդ հաւանօրէն առաջին անգամն էր. այո... Դու շատ գունատ էիր, երբ վերադարձար Հիւրասենեակ:

«Ես տեսայ ձեզ. ես այնտեղ էի, թմբի վրայ: Այդ բանը ինձ կատաղեցրեց: Եթէ ես կարողանայի, երկուսիդ էլ կրսպանէի:

«Նա Սուսաննայի հետ չըպէտք է պսակւի, կրկնեցի ես, երբէք: Նա ոչ ոքի հետ չըպիտի ամուսնանայ, թէ չէ ես աւելի լաւ կ'ամբախտանամ»: Եւ յանկարծ բուռն կերպով տեսայ նրան:

«Այն ժամանակ... գիտե՞ս արդեօք, թէ ինչ արի այն ժամանակ: Լսիր: Ես նկատեցի, որ այդ-պանը պատրաստում է ինչ որ հարիր, որ վերջ դնի շնելի կեանքին: Նա վերցնում էր ասլակին, քարով փշրում և փշրուանքն ածում մսի մէջ:

«Ես էլ մօրիցս վերցրի մի փոքրիկ շիշ, փշրեցի մուրճով և պահեցի գրպանումս: Փառաւոր փոշի էր այդ... Միւս օրը, երբ դու պատրաստում էիր ձեր խմորեղէնը, ես կտրեցի նրանց դանակով և ածեցի նրանց մէջ մօտիս փոշուց... Նա կերաւ նրանցից երեքը... Ես նոյնպէս կերայ մէկը... Մնացած վեցը թափեցի լճի մէջ... Երեք օրից յետոյ երկու կարապ սատկեցին: Յիշո՞ւմ ես դու այդ... Օ՜, լսիր... միայն լսիր... Ե՛ս միայն չըմեռայ... Բայց այդ օրից ես հիւանդացայ... լսիր... Նա մեռաւ... չէ որ դու այդ գիտես... լսիր... Այդ միևնոյն է... Այդ յետոյ, ուրիշ անգամ... բոլորը... ամենից սոսկալին... լսիր...

«Իմ կեանքը, ամբողջ կեանքս... ինչպիսի սոսկալի հանելուկ է եղել: Կրկնում էի ինքս ինձ, ես չեմ թողնիլ քրոջս և բոլորը մահւանս բոպէին կը-պատմեմ նրան... Եւ ահա... այն օրից ես միշտ մտածել եմ այն բոպէի մասին, երբ բոլորը կըբացեմ քո առաջ... Ահա հասաւ. սարսափելի է այդ... Օ՜, քոյրս!...

Գուշակիչը «Օձ»-ը.—Դուշպիր իմ ալաղաց երբ մեռնիս...

«Միշտ, առաւօտ-երեկոյ, օր ու գիշեր մտածում էի ես, չէ որ երբևիցէ հարկաւոր է ասել նրան... Ես սպասում էի. հրպիսի տանջանք... Եւ սպասում էի. հրպիսի տանջանք... Եւ ահա ես պատմեցի... Իսկ այժմ ես սարսափում եմ... սարսափում... Օ՜, ինչպէս սարսափում եմ... Եթէ ես կարողանայի նրան նորից տեսնել. այժմ, երբ մեռնում եմ... տեսնել նրան... Հասկանում ես դու այդ... Առաջին... ես չեմ համարձակւում... բայց դա անհրաժեշտ է... Ես մեռնում եմ... Ես ուզում եմ, որ դու ինձ ներէիր: Ես կամենում եմ այդ... Առանց դրան ես չեմ կարող երևալ նրա աչքին: Օ՜, ասա նրան Հայր-սուրբ, որ նա ինձ նելի... Ասացէք նրան... խնդրում եմ ձեզ... Այլապէս ես չեմ կարող մեռնել»...

—

Նա լուեց և սկսեց կծկւած ձեռքերով ջղաձգաբար ճմլել սաւանը: Նրա շնչառութիւնն աւելի և աւելի ծանրանում էր:

Դէմքը ձեռքերով ծածկելով՝ կարծես Սուսաննանն տեղնուտեղը մեռաւ: Նա մտածում էր նրա մասին. նա կարող էր նրան շատ երկար սիրել և ինչպէս լաւ կարող էին նրանք ապրել: Նա նորից նրան տեսաւ իր առաջ, այն անյայտացած անցեալում, որն այլևս չի կրկնւելու երբէք: Թանգագին մեռելներ, ինչպէս ճմլում էք դուք մեր սրտերը! Օ՜, այն Համբոյրը, նրա մլիկ Համբոյրը: Նա պահել էր նրան իր սրտում: Իսկ յետոյ ուրիշ ոչ մի բան, իր դոյութեան ամբողջ ընթացքում այլ եւս ոչ մի բան...

Յանկարծ ուղղւեց քահանան և կանչեց ուժեղ դողդոջուն ձայնով.

— Սուսաննա, ձեր քոյրը մեռնում է:

Եա տանելով ձեռքերը արցունքոտ դէմքից, Սուսաննան ընկաւ քրոջ վրայ, և ծածկելով նրան տաք Համբոյրներով՝ շշնջաց.

—Ներում եմ քեզ, ներում, իմ մանկիկս...

Ա. Գազարեանց

ՓԱՇԱՆ

(Լեգենդա)

Արանից մօտ ութսուն տարի առաջ, այն ժամանակները, երբ քրիստոնէի գլուխը սոխի գլխից աժան էր Խալիֆի պետութեան մէջ, երբ հայի գլուխը հաւի գլխից աւելի հեշտ էին պոկում ենիչէրիները և արիւնով ողողում յունական թերակղզին ու կղզիները, երզրումի Միւսէլլէհ Թաղի մէջ, սեպհական տանը ապրում էր Աղաչիկ աղան, որն Անատոլիի օսմանեան բոլոր փաշաների, նրանց ձեռքի տակ գտնւած գաւառների և ենիչէրական բանակների սարրաֆների պետն էր: Արհաւիրքի սոսկալի շրջանում, երբ հայը վայրենի գրաստից անտարբեր չէր միւսլիմի համար, երբ ամեն մի միւսլիմանի աչքում գարշելի գազաններից չէր տարբերւում և այդ անասնակերպ էակի գոյութիւնը միայն ստրկական ստոր ծառայութիւններ կատարելու համար էր խնայւած, այդ հայը՝ Աղաչիկ աղան իր խորագիտութեամբ ու հեռատեսութեամբ ոչ միայն նախանձելի վիճակ էր ստեղծել իրան շրջապատողների համար, ազգակիցների համար, այլ իր հովանաւորութեան տակ քառասուն սարրաֆ ունէր, որոնք սրփուած Տրապիզոնից մինչև Բաղդադ ոչ միայն կատարում էին պետական ծանր ու վտանգաւոր ծառայութիւնը, գանձերով և ճախսելով երկրի ել ու մուտը, այլ ամեն կողմ թշւառ ժողովրդին հովանաւորում էին կեղեքիչ բանւորների, սանձարձակ ենիչէրիների և անզուսպ բաշիբոզուկների դէմ:

Աղաչիկ-աղայի հարստութեան և ճոխութեան մասին այնպիսի առասպելական արկածներ էին պատմում, որ լրսողը չէր կարող հաւատալ: Ասում էին, որ նրա մատանեներում ոսկին դիփած թիակներով էին խառնում ու կշռում, իսկ մարգարիտն ու գոհարը ջուալներով էին դարսւած: Բայց ամենայն դէպս, թէև սրանք առասպելներ էին, բայց Աղաչիկ աղան անբաւ կարողութեան տէր մարդ էր: Այդպէս էլ լինելու էր, քանի որ ահաւոր երկրների, աշխարհների հասոյթը նրանց ձեռքից էր անցնում և նրանց միջոցով ճախսւում: Բայց այդ գանձը նրանց մօտ հիմը չէր բռնում, ամեն մի անակնկալ դէպքում այդ գանձերը յանձնւում էին վէզիրներին, կամ ներքինիներին:

Թէև մի արտաքուստ շքեղ տուն չուներ Աղաչիկ աղան, բայց ներքուստ բաւական զարդարւած էր նրա բնակարանը և նրա մլիկ շռայլութիւնը անթիւ մատակներն էին, որ նա պահում էր իր ախոռում: Այն ժամանակները երբ հայը իրաւունք չունէր ձիով պատրաստել, կամ պիլ մտնել, մուսլիմանի ներկայութեամբ ձի աշտանակել, Աղաչիկ աղան երկու-երեք եղակ ձի զարդարած, առաջը խառնած դուրս էր գալիս փառահեղ մատեան նստած և պնում փաշայի սարայը: Այդ գեաուրը այնքան արժանացած էր մեծամեծների չարդանքին, որ այդ եղակ զարդարած ձիերի հետ, նրա առաջից գնում էին մի տասնեակից աւել զարդարած թուրք ծառաներ, որոնք առաջնորդում էին սարրաֆին դէպի սարայ, կամ ուրիշ տեղ:

Մի առաւօտ վաղ, երբ անկողնից նոր էր բարձրացել Աղաչիկ աղան և սուրճն էր խմում, նրանց պրսի դուռը բախեցին: Ծառան վերևի պատնի լուսամուտից դուրս նայելով տեղեկութիւն բերեց, թէ եկողը փաշայի չկոչուած էր, մի ենիչէրիի հետ: Այս լուրը սարսափեցրեց սարրաֆների պետին նա եղկելուց այլագունեց և նշան արաւ, որ խոչոր դուռը բաց անեն, իսկ ինքը մտաւ առանձնասենեակը, պատրաստելով հիւրասիրել անկոչ հիւրերին ընդունարանում: Աղաչիկ աղան անմիջապէս կնոջը իր մօտ կանչելով կարևոր հրամանները տւեց, այլևայլ բանալիներ յանձնեց և դաղտնի դները ծածկաբար ականջում փսրտալով նստեց խորհելու:

Ենիչէրին ու չիբուխ չին մտան ընդունարան, սուրճ խմեցին, ծխեցին ու լափեցին աղանդերները ափեղափեղ խօսակցութիւնները շարունակելով: Երբ արդէն քէյֆերը լրացրած էին այդ պաշտօնականները, ներս մտաւ Աղաչիկ

աղան և չոքեց սովորութեան համաձայն բազմոցի ցած կողմը։ Ծառայողները պատշաճական բարևները տալուց յետոյ, չիբուխչին յարեց.

—Աղայիկ չորբաջի, (այն ժամանակ ոչ մի քրիստոնեի՝ աղա կամ ուրիշ պատուաւոր տիտղոս չէին կարող տալ միւսլիմները) փաշան անմիջապէս քեզ կանչում է։

—Կլխխս վրայ, աչքիս վրայ, հէնց այս րոպէիս պատրաստ եմ ձեզ հետևել։

—Քու խաթէր համար, մենք քեզ բաւական ժամանակ տւինք... ասաց կակազելով չիբուխչին, որով ուզում էր ասել, մեր վարձքը, նէյերը տուր։

—Ինչպէս որ հրամայում է. ասաց Աղայիկ աղան գլուխը խոնարհելով և ձեռքերով, ուսերով պատրաստականութիւն արտայայտելով,—բայց... աւելացրեց նա խորհրդաւոր ձայնով, ուզելով մի բան հասկանալ, հայեացքը Ծառաների դէմքի վրայ ուղղելով.—Պարապ գնալն ու դառնալը ամօթ է և անհաճոյ փաշայի համար։ Արդեօք ինչ բանի կարիք ունի, փող է պէտք, գիշերս նոր սուրհանդակ եկաւ, նոր ճանապարհորդների խօ չէ սպասում։

—Միայն քեզ կանչեց, ասաց չիբուխչին շարաճ, առանց կարողանալու մի բացատրութիւն տալ կոչին։

Չիբուխչին չէր սոսկացնում Աղայիկ աղային. վերջինս ժառանգում էր, թէ ինչ սոսկալի արկած պիտի պատահած լիներ, որ սարքաթի ետևից չիբուխչիի հետ ուղարկել է փաշան և ենիչէրին։ Նրանք դուրս եկան տանից, իսկ Աղայիկ աղան ենիչէրիին և չիբուխչիին գրաւելու համար մի-մի բուռը ղազի (ոսկի) տւեց, որպէս զի դրանց սրտերը շահի և անակնկալ դիպուածում դոնէ կարեկցութեան արժանանայ։

Մինչ մեղմ քայլերով սրանք բարձրանում էին. Բէգթէնիից, Աղայիկ աղան նկատեց, որ մի քանի յայտնի աղաների ևս առաջնորդում էին ուրիշ չիբուխչիներ, կամ ենիչէրիներ, որոնք իրար նկատելով թէև քիչ քաջալերւեցան, բայց մորթւելու գնացող ոչխարների նման մոլորւած էին բոլորն էլ։ Իրար ետևից քսանի չափ սղաներ հաւաքւեցին սարայի դուռը, մինչև որ փաշան կանանոցից դուրս եկաւ և ընդունարան մտնելով, իր ներկայութեան հրաւիրեց աղաներին։ Ապշեցին բոլորն էլ այդ արտասովոր ընդունելութեան համար և երբ դլխները կախած, կանգնած սպասում էին Միւֆթի-փաշայի հրամանին, փաշան իր բազմոցի վրայ ծալապատիկ նստած և ձեռքերով նշան տալով ասաց.

—Չորբաջիներ, նստեցէք, նստէք, ես ձեզ հետ խօսելիք ունիմ, գործ ունիմ...

Թէև աղաները զարմանքի եկած, կշտէ կուշտ իրար նայելով չէին ցանկանում նստելու խալիի լիազօրի առաջ, բայց Միւֆթի փաշան կրկին ու կրկին հրամայեց և նրա-տեցրեց բոլորին։ Երկու կողմը պատերի տակ կարգով չոքեցան ու շարւեցան աղաները այնպէս դժգունած, այնպէս սրտատրոփ, որ կարծես մահւան քրտնքում լինէին։ Վերիք չէր նրանց այդ ճգնաժամը, փաշան հրամայեց ծառաներին, որ չորբաջիներին չիբուխ տան ծխելու, շերբեթ (օշարակ) խմելու և սուրճ հրամցնեն։ Աղաները կարծում էին, թէ այդ օշարակով, կամ ղայֆով իրանց թունաւորելու էր փաշան. բայց ինչպէս չանդգնէին ու մերժէին առաջարկւած բաժակը։ Ճարահատեալ ամենքն էլ ծխեցին, խմեցին և ոչ մի վնասակար բան չընկատեցին։ Մինչ այս՝ փաշան Աղայիկ աղայի հետ խօսում էր առօրեայ հարցերի մասին, իսկ բոլոր աղաների հայեացքն ուղղւած էր փաշայի և սարքաթի դէմքի վրայ և չէին կարողանում մի բան դուշակել, թէ առաւօտ վաղ ինչն էր ստիպել փաշային իրանց հրաւիրելու։ Երբ ղայֆի փինջանները ետ տարան, փաշան իր հայեացքը չիբուխչի բաշիի կողմն ուղղելով՝ ասաց.

—Ներս մտիր, քսան հատ ընտիր բաղխա շալ բեր, չորբաջիների գլխներին կապիր, քսան էլ լահոր շալ բեր մէջքերին կապիր և մէկ-մէկ էլ խալաթ հագցրու։

Այս բոլորը սաստկացնում էր աղաների զարմանքը և ամեն մէկը առանց ծպտուն հանելու՝ ասլուշ ասլուշ իրար երեսն էին դիտում։ Երբ այդ հանդէսն էլ վերջացաւ և ամենքը զարդարւեցան խալիֆի փոխանորդի պահարանից, փաշան զարմադէմ նրանց զննելով ասաց Ժպտալի.

—Ինչպէս սազեց, որքան յարմարեց, կարծես թէ բոլորդ էլ Ջէհէննէմի, Եգեմի համար ծնւած լինիք։ Չորբաջիներ, ես գիշերս երազումս տեսայ, որ դուք, այս 20 հոգիդ այսպէս զարդարւած դուրս էիք եկել և իսլամը դաւանել։ Ես էլ ձեզ այդպէս զարդարելով բաղնիս ուղարկեցի թլփատւելու։ Ես հաւատացած եմ, որ այդ երազս իսկոյն կ'իրականանայ, որովհետև դա երազ չէր, տեսիլք էր։ Մանաւանդ որ երբ դուք բաղնիսից ետ էիք գալիս, այո, տեսիլքիս մէջ մեր Մարգարէն ինձ երևեցաւ, ժըպտած և ճակատս համբուրելով երկինք բարձրացաւ։ Այժմ ես հաւատացած եմ, որ դուք իմ տեսիլս կըփաւաւորէք, անմիջապէս իսլամի դաւանանքը ընդունելով և ինձ հետ բաղնիս կըգաք թլփատւելու։ Հակառակ դէպքում...

Լռեց Միւֆթի փաշան, լռած էին աղաներն էլ և մեռելային անշարժութեամբ հայեացքներն իրար ուղղած՝ մնացել էին գրեթէ շնչասպառ։ Փաշի առաջարկը մերժելը կախազան բարձրանալու պատրաստականութիւն յայտնել էր, իսկ իսլամն ինչպէս ընդունէին...

—Չորբաջիներ, արդէն նկատում եմ, որ դուք այդ համեստ լռութեամբ ձեր համաձայնութիւնն էք արտայայտում, աւելացրեց Միւֆթի փաշան։ Ես անչափ ուրախ եմ, որ տեսիլս կատարւեց և դուք մտաք լոյս հաւատի շաւիղը։ Չորբաջիներին շերբեթ բերէք։ Յոյս ունիմ, որ բոլոր հայերը իրանց մեծամեծների օրինակին կըհետևեն, չօժարակամ կըմտնեն այն ճանապարհը, որի ծայրն է յաւիտենական երանութիւնը։

Աղաները չորացան, քարացան ու մնացին, միայն մի քանիսները աչքի թերթիչների և ունքերի շարժումներով հասկացրին Աղայիկ աղային, որ մի բան պատասխանէ փաշային և իրանց այդ անել կացութիւնից ազատէ։ Աղայիկ աղան որպէս փորձւած մարդ, թրքական քաղաքականութեան ոճով ուզեց ժամանակ վաստկել, մինչև գործը կարգի բերելն, ու ասաց արևելքցու յատուկ ոճով.

—Կեցցէ մեր խալիֆը, կեցցէ մեր փաշան. մենք բոլորս էլ ձեր ստրուկներն ենք, պատրաստ ոչ միայն ձեր բարձր և վեհ առաջարկն ընդունելու, այլ ամենաստոր ծառայութիւններդ կատարելու ճշտութեամբ։ Բայց մեր, այս քսան գառամեալ ու փտածների իսլամը դաւանելուց ինչ օգուտ փաշային, փադիշահին ու պետութեան, մի՞թէ քիչ կան մեզ նման անպէտք ստրուկներ ձեր դերիների

Մալորոսիականց կեանքից

թւում։ Ես հասկանում եմ փաշային ցանկութիւնը, ըմբռնում կամքը, ուստի եթէ փաշան կըբարեհաճի, եթէ թոյլ կըտայ խօսելու և եթէ գաղտնի կըմնայ այս անցքը մեր բոլորի մէջ, ես կարծում եմ, որ աւելի լաւ կըլինի մեզ փաշան մի ամիս ժամանակ շնորհի, մենք գնանք, մեր մէջ խորհուրդի նստենք, դուռ, դրացի, այր, թէ կին բոլորն հաւաքենք, բացատրենք ու համոզենք և ամբողջ քաղաքի ու գաւառի ազգաբնակութեան հետ միասին ընդունենք իսլամի լուսաշաւիղ դաւանանքը։

—Ապրիս, ապրիս, չորբաջի, այդ լաւ ասիր, լաւ մըտածեցիր, ճիշտ սրտիս միջից խօսեցար, ասաց փաշան ուրախացած։ Ըուտ սարրաֆին մի թաղիա շալ էլի բերէք, որ իմ կողմից իր խաթունին ընծայ տանի, որպէս զի նա էլ կանանց մէջ սկսի քարոզել ու համոզել։ Բայց մի ամիս, ոչ աւելի ուշ, ասաց խորհելով փաշան։ Այսօր ճիշտ լուսնի մէկն է, աստղաբաշխս հեռադիտակը ձեռքին քննում է, ճիշտ միւս ամսի Ձաբանի մէկին, եթէ բոլորդ միասին չըհաւաքուէք, չըգաք դաւանութիւնն ընդունելու, գիտէք, որ նոյն օրը առանց ետացնելու՝ ձեզ կախաղան բարձրացնել կըտամ, կայքերդ արքունիք կըգրաւեմ և ձեր աղջիկներն ու կանայք հարճ կըբաժանեմ ենիչէրիների մէջ...

—

Ընչասպառ և դալկացած, մեռելային դէմքով տուն դարձան աղաները, երկիւղից չըկարողանալով ոչ միայն խօսել, այլ չորս բոլորները նայել։ Ամենքն էլ մոլորուել էին, չըգիտէին թէ ինչպէս սիրտ դիմաւորէին այդ սոսկալի վախճանին։ Երբ թրթռում էր շատերի սիրտը մահուան տագնապով, երբ շատերը իրանց կտակներն էին կատարում, Աղայիկ աղայի սպասաւորը նրանցից իւրաքանչիւրի տունը մտաւ և հրաւիրեց Աղայիկ աղանից տուն խորհրդի։ Նոյն օրն իսկ նրանք իրանց գաղտնի վճիռը կայացրին և գործադրեցին։

Իսկ Մուֆթի-փաշան բոլորովին համոզուած, որ չորբաջիները պատրաստում էին իրանց ազգակիցների հետ ամբողջապէս միացած իսլամն ընդունել, նա վաղօրօք իր պատրաստութիւններն էր տեսնում։ Այդ գործով նա, որպէս ջերմեռանդ իսլամ, ոչ միայն իր կրօնական-նուիրական պարտականութիւնն էր կատարում, այլ յոյս ուներ, որ մի այդպիսի օգտակար արարքով սլիտի սուլթանի սիրտը բոլորովին գրաւէր և բարձրանար մեծ-վէզիրի բազմոցը։ Այդ իսկ պատճառով փող էր հաւաքում, մոլլաների էր հրաւիրում և նրանց աջակցութիւնը խնդրում, իսլամ մեծամեծներին յորդորում, որ զոհաբերութիւններ անեն փառահեղ կատարելու այդ նորադարձների թլփատութեան հանդէսը։

Հակառակի նման սաստիկ դանդաղ էին անցնում օրերը, որից տանջւում էր և ինքը փաշան, բայց նրա խոջան այնքան յորդորներ էր կարդում, այնպէս մխիթարութիւններ էր տալիս, յաւիտենական կեանքում փաշայի վայելելիք կեանքը այնպիսի վառ գոյներով էր նկարագրում, որ համարեա թէ վերացական երևակայութիւնների մէջ էր մթացնում փաշան օրերը։ Որպէս զի հանդէսը կատարեալ լինէր և ինքն էլ՝ փաշան սուլթանական մի մեծ շնորհաշնորհութեան արժանանար իր կատարելիք այդ հսկայական գործի համար, Մուֆթի փաշան ժամանակին իր կ. Պոլսի գործակալի միջոցով խմացրել էր հանգամանքները խալիֆին և օրից օր սպասում էր պատասխանի։

Օրերն էլ եկան, լրացան։ Աղայիկ աղան կիսատ պըռատ պատասխաններով փաշին խմացնում էր, որ նրանք պատրաստուում են խոստացած օրը կատարել իրանց որոշումը։ Յանկարծ, ամսի վերջի երեկոյեան՝ փաշային խմացրին, որ Կ. Պոլսից՝ արքունիքից առանձնապէս յատուկ պաշտօնեայ է եկել բարձրագոյն հրովարտակով։ Ուրախութիւնից վեր վեր էր ցատկրտում Մուֆթի փաշան։ Նա հրամայեց, որ իսկոյն հրաւիրեն Էրզրումի միւֆթիին (դենպետ), դադիին (դատաւոր)։ Մեծամեծները և բոլորը մի ժամ չանցած՝ հաւաքուեցան փաշայի սարայի դահլիճը, որ պալատից ուղարկած պաշտօնականը առաջարկեց Մուֆթի փաշային համբուրել խալիֆի հրովարտակի կնիքը։ Յետոյ բաց անելով կարդաց հրովարտակը, որով հրամայուած էր Մուֆթի-փաշային անմիջապէս, հրովարտակը կարդալուց առանց մի ժամ ուշանալու՝ թողնել Էրզրումը և ճանապարհ ընկնել դէպի Ղայսերի, նոյն պաշտօնով։

Այս չանկարծակի հրովարտակից ապուշ կտրած, նոյն գիշերն իսկ քաղաքից դուրս եկաւ Մուֆթի-փաշան և առանց իր երազի կատարածին հասնելու, ուղղուեց դէպի Ղայսերի, կասկածը սրտում, վրէժխնդրութեամբ բորբոքուած։ Ինչպէս դուշակել էր Մուֆթի-փաշան, նոյնպէս գրել ու իմացրել էր իր Կ. Պոլսի գործակալը, թէ այդ պաշտօնափոխութեան խաղը խաղացել էին նրա գլխին Էրզրումի հայերը։ Այս բանից աւելի սրտմտած ու բորբոքուած Մուֆթի-փաշան՝ ամբողջ կարողութիւնը, ոյժն ու ազդեցութիւնը գործ դնելով, ներքինապետների միջնորդութեամբ, երեք տարուց յետոյ նորից նշանակուեց Էրզրումի սյալաթի վալի-փաշա։ Նա սխալուած թուենալի սրտով ճանապարհ ընկաւ դէպի Էրզրում, մտքումը հաստատապէս որոշելով անպայման կամ իսլամացնել այդ անօրէնների և կամ կախաղանի վրայ ճենճրատացնել։

Բայց հայ աղաներն էլ ձեռքերը ծալած չէին նստած, նրանք իրանց գոյքը, վաստակը, ժողովածը արժանաւոր տեղ գործածելու վարժուած էին։ Մինչ Մուֆթի-փաշան հրճւալի մօտենում էր Էրզրումին, մինչ երազում էր ամբողջ Կարնոյ գաւառը իսլամացնել, թաթարն էլ ամենայն արագութեամբ Կ. Պոլսից սլանալով նրան էր հետևում։ Բայց որքան արագ սլանում էր թաթարը, չէր կարողանում հասնել Մուֆթի փաշայի կարաւանին, որ վրէժխնդրութեամբ տոգորուած՝ շտապում էր նոր պաշտօնավայրը։ Մուֆթի-փաշան մտաւ Էրզրումի Օւան և հեռւից նկատելով Կարնի միջնաբերդը, բարձր աշտարակները, մինարէները՝ սկսեց ուրախութիւնից արտասուել։ Կարաւանին հրամայել էր փաշան անընդհատ շարունակել և անսպատճառ նոյն գիշերը քաղաք մտնել։ Երեկոյեան նրանք հասան Կան, որ Էրզրումից քառորդ ժամու ճանապարհով հեռու մի գիւղ է։ Մինչ փաշան չորհնած թան էր խմում այդ գիւղում, արքունի թաթարը հասաւ նրա ետևից և այնտեղ իսկ տեղ համբուրելու սուլթանի հրովարտակի կնիքը։

Այդ հրովարտակի համաձայն, Մուֆթի-փաշան ճանապարհից պարտաւորուեց ետ դառնալ իր պաշտօնատեղին՝ Ղայսերի և անգութ դահճի մուրազը մնաց անկատար։

Գործից շատ մօտ մարդիկ պատմում էին, որ Էրզրումի աղաների վրայ այս երկու հրովարտակը նստեց չորս հարիւր հազար քէսա ոսկի, որ մեր փողով արժէ մօտաւորապէս քսան միլիոն րուբլի *), և գումարը բաժանուել է մեծ վէզիրի, դենպետի ու ներքինապետի մէջ...

Ահա թէ որտեղ էին ծախսում մեր պապերը իրանց դանձերը...

Ասրպես

*) Մի քէսա ոսկը հինգ հարիւր ղուրուշ էր, կամ տասը բաջախլի։

ՀԱՑՆԷԻՑ

I

„Ein Jüngling liebt ein Mädchen,
Die hat einen andern erwählt“...

Պատանու սիրտը կրպաս աղջկան,
Բայց աղջիկն ուրիշ սրտի էր հաւան.
Ա՛ս էլ վիր առաւ, ուրիշին սիրեց,
Անթառամ պսակին արժանացընից:
Աղջիկը սասիկ վիրաւորուեցաւ
Եւ մէկն ու մէկի հետը կարգուեցաւ,
Սիրտ պատանին առաջին անգամ
Ճաշակեց կեանքի պղտոր դառնահամ...
Թէև սա հին է, շատ հին պատմութիւն,
Բայց ո՛րը է կորցրել նա իր թարմութիւն,
Այն ո՛ւմ սիրտն է, որ կենդան կըմընայ,
Թէ մի այսպիսի փորձանք ունենայ:

2

ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ

„Die blauen Veilchen der Aeugelein“...

Պապոյտ աչերի,
Մանուշակները,
Ճերմակ ճեռների
Թարմ շուշաննները,
Կարմիր վարդերը
Ջո՛ւ ալ թըշերին,
Գարնան օրերը
Օ՜հ, միտըս բերին...
Նորանք դեռ դալար ծաղկում են, փըթթում
Եւ քո թառամած սիրտը քօղարկում:

Զ. Բալուեան

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՊԷՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԵՒ ԱՊՐԵԼ ԵՆ ԱՒԱՆԴ*

Զրոյցներ

I

Երբ որ մենք ման ենք գալիս մեր քաղաքները կամ ճանապարհորդում ենք նաւով կամ երկաթուղով, սովորաբար մեր մտքից անդամ չի անցնում համեմատել այժմեան մեր կեանքի պայմանները մեր հեռաւոր նախնիքների կեանքի պայմանների հետ: Մենք վայելում ենք կեանքի բարիքը թեթև և հեշտ կերպով, մինչդեռ մեր նախկայ կատարելագործեալ դրութեանը հասնելու համար, պէտք էին հազարաւոր տարիների անդուլ և յամառ աշխատանք:

Մենք գիտենք, որ հէնց կենքներս տարէցտարի փոխւում ենք և մեր շուրջը շատ բան փոխւում է աշխարհիս երեսին: Մտքով յետ նայեցէք ձեր սնդկական անցեալի վրայ, դուք թէև շատ տարի չունիք, բայց որքան փոփոխութիւնները է կատարել ձեր կենտանիքում, ձեր պարապմունքների մէջ: Այդպիսի փոփոխութիւնները պատահում են ամբողջ քաղաքների, պետութիւնների, ազգերի կեանքում: Պատմութիւնը ձեզ տեղեկացնում է այն բոլոր փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել պետութիւնների, ազգերի, մարդկային բոլոր ցեղերի կեանքում, մինչև որ ներկայ վիճակին են հասել, ինչ որ հիմա կայ երկրիս երեսին և մեզ ծանօթ է:

Բայց մեր խօսքը պատմութեան մասին չէ: Պատմութիւնը կարելի է դասել դասագրքերում. դուք կարդացել էք պատմական հատուածներ և ընտիր հատուածների մէջ, մենք ուզում ենք ալսքեղ առաջարկել ձեզ այն՝ ինչ որ չէք գտնում դասագրքերի մէջ և չէք լսել դպրոցական տարիներում: Մեր դրոյցներից դուք հետզհետէ կըհասկանաք, թէ ինչ է նոյն իսկ պատմութիւնը, որ դուք անցել էք դպրոցում և կըլսէք այնպիսի բաներ, որոնց մասին թերևս չէք լսել:

Այժմ անցնելով մեր առարկային, կանգնում եմ մի փաքը մտաբերէք աշխարհագրական դասերից սովորածները: Աչքի անցրէք քարտէզը, երկրիս վրայ բնակուած ցեղերի, ազգերի, պետութիւնների սահմանները տեսնելու համար: Շատ աւաջն է Եւրոպան իր լուսաւորուած ազգերով. դիտեցէք ձեր շուրջը, մտաբերեցէք նրանց մասին լսածները—նրանց քաղաքների առևտրի, արդիւնաբերութեան, ճանապարհների հաղորդակցութեան, ծովագնացութեան մասին, ինչեր են պատմել ձեզ. մի՛ւս կողմն Ասիան է իր ազգերով: Մի՛թէ եւրոպական ազգերի պէս են ապրում մարդիկ Ճաճկաստանում, Պարսկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում: Ո՛չ նրանք ապրում են շատ վատ: Սրանցից անհամեմատ վատ են ապրում Աֆրիկայի նեգրները (սեւամորթները). վերջապէս դուք գիտէք, որ Աւստրալիայում, Հիւսիսային Ամերիկայում և Աֆրիկայի մի քանի նահանգներում կան իսկական վայրենիներ, որոնց հետ մենք ոչ մի դէպքում չենք համաձայնիլ մեր վիճակը փոխել: Եթէ մենք ուզենանք երկրիս վրայ ապրող բոլոր ցեղերը մի շարքում դնատուորել, սկսած վայրենի աւստրալիացիներից, վերջացնելով զարդացած ֆրանսիացիներով, այն դէպքում մեր աչքի առաջ մի սանդուղք կըպատկերանայ, որի ամենավերջին աստիճանում կանգնած կըլինեն ամենալուսաւորուած ազգերը՝ արևմտեան եւրոպացիները և հիւսիսային ամերիկացիները, իսկ նրանցից պակաս կրթութիւն ստացածները՝ արևելեան եւրո-

* Այս յօդուածն առաջարկւում է պատմութիւնից և աշխարհագրութիւնից փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցողներին:

պաղլները, ապա ասիացիները և այսպէս աստիճանաբար իջնելով՝ վերջապէս սանդուղքի ամենաստորին աստիճանում կրկանգնեն կարմրամորթները և Նոր-Զելանդիայի բնիկները։

Այժմ, փոխանակ նեղկացումս երկրի զանազան անկիւններում ապրող ազգերի ու ցեղերի վրայ նայելու, թէ նրանք ինչպէս են ապրում հիմա, նայենք նրանց վրայ անցած զանազան դարերում, համեմատութիւնը նոյնը կըլինի և այս դէպքում մենք պարձեալ նոյն սանդուղքը կ՚ունենանք։ Վերցնենք օրինակի համար Հայերիս։ Մենք ունեցել ենք պատմական անցեալ։ Ընթերցելով Ռուբինեան, Բագրատունեան և Ըրշակունեան շրջանների մասին, ու միայն մտքով պանալով դէպի յետ՝ Քրիստոսից 4—5 հարիւր տարի առաջ, կըտեսնենք որ այդ հեռաւոր ժամանակներում թէև մեր նախահայրերը թողել են վայրենութիւնը, բայց դեռ ևս բարբարոս վիճակի մէջ են եղել. նրանք դէնքեր քիչ են ունեցել. զրելու արւեստը չըգիտէին, ուստի և բերանացի, որդոց որդի աւանդում էին իրանց երգերն ու աղօթքները, իրանց քաջագնական գործերը։ Այդպէս էլ կար ժամանակ, երբ մեզ շրջապատող հին ազգերը կենցաղավարութեամբ նման էին մեզանից հազարաւոր տարիներ առաջ ապրող մեր նախնիքներին։ Երեք հազար տարի առաջ, երբ յոյները հիւսում էին Եղիականն ու Ոդիսականը, ապրում էին նոյն կեանքով, ինչպէս դարեր առաջ հայերը, աստրեստանցիները, բաբելացիները և այլն։

Նշանակում է, որ կռմից և նայենք ցեղերի, ազգերի, համայնքների վրայ, թէ ներկայ ժամանակից դրութեամբ և թէ պատմական դարերում, նրանց կեանքի մէջ կատարած յաջորդական փոփոխութիւններին, մենք կրտեսնենք որ մարդկի դարերի ընթացքում հետզհետէ լաւացնում են կեանքի պայմանները. վայրենի, նախնական վիճակում կրած զրկանքներն ու վշտերը անցնում են և ստեղծում է աւելի յարմար, դուրեկան կեանք։ Սակայն պէտք է նկատել, որ դժբախտաբար ամեն տեղ և միշտ այսպէս չի լինում։ Պատահում են դէպքեր, որ մարդկի այս կամ այն երկրում ամբողջ դարեր աւելի վատ են ապրում, քան թէ իրանց նախնիքն են ապրել։ Այս բոլորն ի նկատի ունենալով՝ այժմ տեսնենք թէ ինչպէս հետզհետէ փոխւել է մարդկային կեանքը և խօսենք առաջ այն մասին, թէ ինչպէս ապրում էին և այժմ էլ ապրում են վայրենիները և թէ ինչ պատճառներով փոխուեց նրանց կեանքը։ Ինչպէս նրանք սովորեցին կերակուր պատրաստել և այդ նպատակի համար ամաններ շինեցին։

II

Երկիան մեծանալու, մարդս ապրելու համար իւրաքանչիւր օր դործ է անում որոշ չափով ուտելիք։ Քաղցը, այսինքն սնունդի պէտքը, այսօրւան օրը բանւորին քշում է այն տեղերը, որտեղ որ աշխատութեան վարձ են տալիս։ Նա հարկադրում է նրանց ճանապարհ ճեղքել լեռների միջից, կամուրջներ դցել գետերի վրայ, երկաթուղու գծի հարթութիւնը պատրաստել, որոնցով կատարում է ամենօրեայ հաղորդակցութիւնը հեռաւոր քաղաքների հետ։ Քաղցը, մարդկանց վրայ իշխող այդ անտեսանելի թագաւորը, կանգնեցնել է տալիս նրանց տաճարները, դօրանոցները, բանտերը։ Քաղցը նստած է ոստայնանկի մեքենայի մօտ, երբ որ բանւորն օրն ի բուն աշխատելով՝ գործում է շքեղ մետաքսի կամ ամենքի համար անհրաժեշտ բամբակի ու բրդի գործւածքներ։ Քաղցը դնում է գութանի յետևից, կանգնում է ձուլարանի հնոցի մօտ, ստիպելով մարդուն չարաչար աշխատել։ Քաղցն աշխատելուց ոչ պակաս դրդում է մարդուս ոճրագործութեան։ «Անօթին երազում հաց կրտեսնի, ծարաւը՝ ջուր» — ասում է հայկական առածը։ Քաղցը շշնջում է թշուառ նահատակների ականջին, թելադրելով նրանց յուսահատական մտքեր։ Նա զրկում է խելքից մի քանի օր առողջ մնացածներին, օր. նաւաբեկութեան հանդիպողներին, ճանապարհը կորցրածներին և այլն։

Այս դժբախտները կորցնում են ամօթ, կարեկցութիւն, ամեն տեսակ յարգանք դէպի մերձաւորը, և կատարում են այնպիսի գործեր, որոնց մասին առանց քստմնելու չի կարելի խօսել։ Քաղցած մարդիկ ուտում են իրանց ընկերներին, մայրերն իրանց զաւակներին։ Գիտնականներն ասում են, որ քաղցի բոլոր տանջանքները միայն 5—6 օր կարող են տևել, վեցերորդ օրը լոպաւ քաղցած ու ծարաւ մարդը կարող է մեռնել։

Աստւած ազատէ մեզ զգալուց քաղցն իր սարսափելի ծայրայեղութեամբ։ Մեզանից շատերը, շատ հաւանական է, նրան չեն ճանաչում այն զրութեամբ ինչի մասին որ Հիմա ասւեց։ Իրաւի, մեզանից ամեն մինը մի-մի բան ուտելով, յագեցնում է իր քաղցը։ Իսկ ուտելու էլ շատ բան կայ. մէկն այսօր ուտում է ցամաք հաց և մի կտոր պանիր, միւսը՝ արդանակ և միս։ Գիւղացին, որի համար աղը մրգեղէնի տեղ է ծառայում, իսկ շաքարը մի հաղւագիւտ բան, բրդում է հացը կաթի ու մածնի մէջ, այն ինչ մի բախտաւոր աղայի սեղանը լիքըն է լինում զանազան համադամ կերակուրներով, որոնց վրայից ուտում է մրգեղէն և անուշահամ խմիչքները խմում։ Սակայն այդ բոլոր բազմազան ճաշերը մի քանի ժամից յետոյ միատեսակ արիւն են դառնում։ Կերակրի տարբերութիւնը, չըխօսելով նրանց բազմազանութեան մասին, քաղաքներում ապրող քաղաքակիրթ ժողովրդի սեպհականութիւն է. բազմազան ուտելիք կարելի է ճարել միայն այնտեղ, ուր որ կայ մեծ շուկայ։ Պամպասների որսորդը կերակրւում է գոմշի մսով և երբէք նրա ուտելիքի տեսակը չի փոխւել բուսական խառնուրդով։ Հնդիկը գործ է անում միայն բուսեղէնի, էսքիմոսը՝ բացառապէս միս և կենդանիների ճարպ, արաբը ուտում է արմաւ և բրինձ։

Քանի որ մարդիկ չէին սովորել հողը վարել և. սննդարար սերմեր ցանել, քանի որ չըգիտէին հնձել, ծեծել ու աղալ և քանի որ չունէին շատ օգտակար գործիքներ, մարդիկ յաժարակամ չէին ապրում այն երկրներում, որտեղ որ չրկային ուտելիքներ բնական վիճակով: Այնպէս որ, եթէ սկսենք մտածել նախնական մարդու կեանքի մասին, նրա սկզբնական զարգացման վրայ, այն ժամանակ, պարզ է, պէտք է ենթադրենք, որ նախնական մարդու բնակութիւնը հէնց այն տեղերումն էր, ուր որ բնութիւնը ինքը առանց որևէ դժւարութեան, տալիս էր օրական պարէնն ամեն մի ձեռքի, ով կըմեկնէը այն սնունդ ստանալու համար: Իսկ այդ օրինակ կացութեան պայմանը կար այրեցեալ գետու տակ, այն էլ ոչ ուրիշ տեսակ, եթէ ոչ արմաւենու ստերում, ինչպէս սովորաբար պատկերացնում ենք մեզ այն երանաւէտ դրախտը, ուր մեր նախաճնողները կարիք չունէին կռիւ մղել մի կտոր հացի համար: Թէ վաղուց անցած ժամանակներում և թէ այժմս այդ երկրներում մարդիկ հնձում են՝ չըցանած, և ժողովում են չըփռած: Այն տեղերում աճում է սագոյեան արմատը և տալիս է մալայեան պապուաս ցեղերին համեղ սննդի առատ պաշար. Հարաւային Ծովի և Հնդկաց ովկեանոսի մի քանի բոտալին կղզիներում բնակիչների ամենօրեայ սնունդը բացառապէս կազմում է կոկոսի ընկոյզը, որի հետ մի-մի անգամ ձկան որսը զառնում է նրան կերակրի երկրորդ տեսակը:

Ընդհանրապէս արմաւենիներն ամենահարուստ ստեղծուն են մարդուս. նրանցից մի քանիսը տալիս են մարդուս ոչ միայն օրական սնունդը, այլև արմաւի գինի, ուստի և այդ տեղերում միշտ սփռոցը դցած է և ճոխ է ու բաւականութիւնով լի: Եգիպտական արմաւենին տալիս է տարեկան 200 սննդարար արմաւներ, որոնցից իւրաքանչիւրը նարնջի մեծութեան է լինում: Սահարա անապատի օազիսներում խուրման կերակրում է ոչ միայն ձիաւորին այլ և նրա ձիուն: Հացի ծառը, որ սկզբում բսնում էր Պոլուկեան և Փիլիպպեան կղզիներում, պորինէզացիների հետ տարածւեց Հարաւային Ծովում: Նրա պտուղները սեխի մեծութիւն ունին, և ուղի ամիս շարունակ պտուղ է հասցնում: Իսկ տարայ մնացած չորս ամսի համար պտուղները կարող են գետնի տակ պահվիլ, առանց որևէ աշխատութեան: Սակայն այդ տեսակ ինայողութեան պէտք էլ չըկայ, որովհետև այն մնացած ամիսներում, երբ հացի ծառը պտուղ չէ տալիս, այդ երկրներում բսնում են ուրիշ պտուղներ, որոնք ոչ պակաս համեղ և սննդարար են: Ասում են, որ 27 հատ հացի ծառը բաւական է 12 հոգուց բաղկացած մի ընտանիք ամբողջ տարի կերակրելու համար:

Կոկոսի արմաւն աւելի մեծ օգուտ է տալիս մարդուս: Պշակաճ ծառը շատ շուտ է աճում և արդէն վեցերորդ տարում պտուղ է բերում. նա երբեմն զառնում է հարիւր տարեկան: Մի ծառից ստացւում է 2—3 հարիւր ընկուզ, որ ծածկւած է եռանկիւնաձև թելուն կճեպով: Կճեպի տակը զտրնւում է պինդ վայտանիւթ կեղևը. հիմքի մօտ երեք բացւածք կայ, որոնցից թափւում է սերմը: Ընկոյզը սկզբում լինում է հեշտանիւթ, որ քիչ-քիչ պնդանալով՝ կազմում է սպիտակուցը, վոքրիկ կորիզներով: Այս բոյսի ոչ մի մասն անգործադրելի չի մնում և ջերմ գոտու բնակիչներն ամեն օր օգտւում են նրա այս կամ այն արտադրութիւնով: Խակ պտուղների կորիզաւոր հեղանիւթ սպիտակուցը տալիս է զովարար խմելիք, պնդացածից քամում են կոկոսի իւղ, և շինում են սապոն, օծանելիք կամ գործ են ածում իբրև վառելանիւթ: Փայտանիւթ կեղևից շինում են բաժակներ, անօթներ կամ զանազան ճախարակային շէնքեր: Նրա մութ կարմիր կեղևի թելերից պատրաստում են զանազան հիւսւածքներ, պարաններ, փոկեր. նորաբողբոջ կոկոնը կտրելով՝ ծորում է համեղ հիւթ, որից պատրաստում են շաքար, իսկ այդ հիւթի թթւելուց՝ ոդելից խմիչքներ: Կոկոսի կոկոնը գործ է ածւում որպէս բանջար, տերևները ծածկոցների, շորերի տեղ են ծառայում, բնիկ շինում են նաւերի կայմեր, ցանկապատներ, հրացանի կոթեր, վերջապէս վառում են նրան: Զատ հաւանական է, որ նախաստեղծ մարդուն իր առաջին պտուղն առաջարկողը կոկոսի արմատն էր: Ահա հէնց այս տեսակ երկրներում, որտեղ բնութիւնն ինքը, առանց մարդու կողմից որևէ աշխատանք պահանջելու՝ տալիս է կերակրելու միջոց, այդպիսի տեղերում հեշտ կըլինէր մարդուն ապրելու համար: Ժամանակի ընթացքում այդ ամենը փոփոխւեց, մարդիկ շատացան, նրանց տեղը նեղացաւ և նրանք սկսեցին ցրւել այլ և այլ կողմեր:

Ես բոլորը չեմ թւում, որոնք վայրի դրութեամբ են բոսնում, որոնք կարող են որպէս կերակրող մարդուս պէտք գալ: Բուսաբանութիւն սորած մարդիկ, առանց դժւարութեան կարող են ասածները լրացնել. իսկ մի այլ ճանապարհորդ որ եղել է տաք երկրներում, զուցէ զարմանայ, թէ ինչպէս մոռացել ենք մի քանի սննդարար բոյսեր: Սակայն մեզ համար բերած օրինակներն էլ հերիք են: Մենք միայն ուզում էինք ասել, թէ մեր նախաճնողները, իրանց վայրենի վիճակում, երբ չըգիտէին հողը մշակել, չունէին հարկաւոր գործիքներ և ընտանեցրած կենդանիներ, կերակրւում էին այդ տեսակ կերակրով և վատ չէին զղում:

III

Բուսեղէն կերակրի մասին ասածներիցս էլ պէտք է այնպէս հասկանալ, որ մարդս ամենահին ժամանակներում կերակրւում էր բացառապէս բոյսերով և բրամինի կամ բուդդայականի նման կենդանական կերակրի անունը լսելիս՝ սարսափ էր զղում: Բուսեղէն կերակուրն առաջին տեղում ասացինք այն պատճառով, որ մարդս ատամների և ստամոքսի կազմութեան համաձայն, ինչպէս ներկայումս է,



Կոմպոզիտորը ստեղծագործելիս

իր գոյութիւնը կարող էր պահպանել բուսեղէնով և միայն քաղցը կարող էր հարկադրել նրան մնունդի ձևը փոխել: Նոյն իսկ խոտակերների թւին պատկանող կենդանիները, համաձայն իրանց կազմուածքի, այնքան էլ խիստ չեն պահպանում բնութիւնից իրանց վերագրած պահեցողութիւնը: Այսպէս, օրինակ, հին աշխարհի կապիկները, որոնք առատմների կազմութեամբ ոչնչով չեն տարբերւում մարդուց, նրանց մէջ էլ նկատւում է կերակրի բազմազանութիւնը: Պաւիան կապիկները սոկում են ծառերի տերևներն ու կոկոնները, ծաղիկներն ու խակ պտուղները, քաղում են գետնից տակրւքաւոր բոյսերը, բայց շատ անգամ էլ դարանամուտ են լինում այն կենդանիներին, որոնց կարողանում են յաղթել: Նրանք շրջում են քարերը, յուսալով նրանց տակը միջատ գտնել: Նրանք իրանց բերանը քաղցրացնում են ճանճերով ու սարդերով, թիթեռներով ու բզեզներով և կամ նրանց թրթուրներով ու բոժոժներով: Վերջապէս նրանք ամենաանգութ բան աւերողներ են, ուտում են թռչունների ձուերն ու դեռ չբլետրաւորած ձագերը և ուտում են ակներև բաւականութեամբ: Կապիկներից շատ չեն տարբերւում Աստրալիայի բնակիչները, որոնք բացի ամեն տեսակ զլշակեր թռչուններից, ուտում են օձաձկներ, ամեն տեսակ ձկներ, չղջիկ, գորտ, մողէս, որդեր և այլն: Միջին Աֆրիկայի նեգրները, բացի շան ու մարդկանց մսից, չեն զրկում իրանց ոչ մի կենդանական սնունդից. նրանք ուտում են մեծ մկներ, օձեր, իւղալից կարիճներ և ամեն տեսակ թրթուրներ: Էրէն ու ձուկը Գւինէայի հնդիկի գլխաւոր ուտելիքն են կազմում, բայց միևնոյն ժամանակ նրանք սիրով ուտում են մուկ, կապիկ, գորտ, որդեր, մրջիւններ և բզեզներ: Եթէ մեզ ձեզ հետ միասին առաջարկէին նախաճաշել կամ ճաշել այսպիսի զզուելի բանով, անկասկած, մենք կրնախադասէինք առժամանակ քաղցած մնալ, քան թէ ուտել օրինակ—գորտ: Թէպէտ երրորդ օրը քաղցած մնալով՝ եթէ գորտին հիանալի չզտնէինք, բայց և այնպէս կ'ուտէինք:

Առհասարակ դէպի որևէ ուտելիք զգացած զզւանքը հիմնւում է գոյութիւն ունեցող սովորութեան վրայ, կամ ուրիշ կերակրի վարժելու վրայ, և զարշում ենք այն առարկաներից, որոնք անծանօթ են մեզ կերակրի համար: Այդ պատճառով մենք չենք տարսափիլ, երբ տեսնենք, որ չինացիները. ախորժակով ուտում են սալամանդա ծիծեռնակի բունը, կամ արաբները՝ տապակած մորեխ: Մորեխը արաբի համար Աստծուց ուղարկած պարգև է, նրան կշտացնելու համար: Չէնց եւրոպացիք չեն վախենում ստամոքսի խանգարելուց, որ անպայման կ'առաջանայ երէ, պանիր և խեցգետին գործածելուց: Վերջինս արդէն արտաքին տեսքից խիստ տզեղ է, բայց մեր սիրողի համար շատ օգտակար է, որովհետև մաքրում է ստամոքսի ջրերը և նեխած ժահրը քանդում, դուրս բերում:

Այսպէս ուրեմն, եթէ մենք ընդհանուր հայեացք ձգենք նախկին մարդկային ցեղերի սնելու պատկերի վրայ, կըտեսնենք, որ մարդս մինչև երկրագործութիւն սովորելը, մինչև անասուններին ընտելացնելը, կերակրւում էր ոչ միայն բուսեղէնով, այլև զորձ էր դնում ամեն միջոց քաղցն յագեցնելու համար:

Եթէ մենք այժմ անցնենք ծովի ափը, կըտեսնենք, որ այստեղ առանց դժւարութեան ամբողջ տարւայ ընթացքում կարելի էր Հաւաքել եղեգնուտի և ծովային ծանծաղուտի մէջ սննդարար խեցեմորթներ և ոստրէներ. վերջին ժամանակներս գիտնականները զտան, որ Պանիայի կղզիների ամբողջ երկրութեամբ, դետնի տակը և երեսին կան ոստրէների կոտրած կճեպի խառներ ու դէզեր, որոնք մի ժամանակ մարդուն կերակրի տեղ են ծառայել: Յետոյ ապացուցւեց, որ Բալտիկ ծովի կակղամորթներով կերակրւում էին այժմեան Պանիայի բնակիչները այն հեռաւոր դարերում, երբ դեռ չ'ունէին ոչ մի դէնք, բացի քարից: Պարզ էին նրանք ափը, որտում էին կակղամորթներին, հէնց այդտեղ ուտում էին և պատեանները դէն ձգում: Մեղ հասած նախնական դարերի ուտելիքի մնացորդները կոչւում էին «խոհանոցի մնացորդներ», թէև ի հարկէ, այստեղ ոչ մի խոհանոցի մասին խօսք լինել չի կարող: Չէնց որ ուսումնականների աչքն ընտելացաւ այս երևոյթը ճանաչել, անմիջապէս շատ հետազօտողներ շտապեցին գտնել նոյնպիսի խոհանոցի մնացորդներ Շոտլանդիայում, Հիւսիսային նահանգներում, Բրազիլիայում և Աստրալիայում:

Ջրի մօտ ապրող բոլոր մարդկանց համար կերակրի մէջ գլխաւոր տեղը բռնում է, ի հարկէ, ձուկը: Հկնորսութիւնը, առանց գործիքների, այսինքն առանց կարթի և ուռկանի ամենահասարակ գործ էր. ճանապարհորդները տեսել են Կամչատկա թերակղզու ներսը, ափից մի քանի վերստ հեռու, վոքրիկ, հանդարտ ջրերում մեծ ձկներ, որոնք մտել էին այդ տեղերը ձու դնելու համար: Այդ երեք քառորդ արշին երկարութիւն ունեցող ձկները տեսնւել են այնպիսի բարակ առուակներում, որ նրանց կրնակը Հազիւ էր ծածկւում ջրով: Նրանք դանդաղութեամբ բարձրանում էին վերև ջրի հոսանքով և հեշտութեամբ կարող էին ձեռքով բռնւել:

Ուրիշ տեղերում, ուր ձկնորսական պարագաներ չկան, տեղացիները գետերի ջրերը թողնում են առուների (բանտ) մէջ, ապա ջուրը կտրում են և ջուրը առից դուրս են թափում ու յետոյ ջրի հետ դնացած ձկներին ձեռքով բռնում: Ամերիկայի երկարատև գիտողութիւնն էր հարկաւոր ջրի և ձկան վրայ, որ կարողանային ձկներին թունաւորել և ինչ որ այժմ սրզելւած է մեզանում, յաջողութեամբ այդ բանն անում են Հարաւային Ամերիկայի հնդիկները: Սրա համար նրանք սովորաբար դետի մէջ ձգում են թունաւոր բոյս, պտուղ և այլն. ձուկը խելագարւում է և ջրից դուրս ընկնում:

Այս բոլոր ասածներից համաձայնւեցէք ինձ հետ, որ մարդկային ցեղի մի որև է տեղից դէպի

զանազան երկրներ և ցամաքներ տարածելը տեղի է ունեցել շատ կանուխ: Գոնէ կերակրի պակասութիւն չէ եղել ոչ մի տեղ, ընդհակառակն, ամեն տեղ տարածւած էր համեղ սնունդ, բայց ոչ միատեսակ առատութեամբ, որը և պատճառ եղաւ մարդկանց ցրելուն: Որքան էլ որ նախապատմական ժամանակների պատմութիւնը մթութեան քողով է ծածկւած, այնուամենայնիւ միշտ և ամեն տեղ ցեղերը շարժւելիս են եղել, այնպէս որ նստակեացութիւնը, մի տեղում հաստատւելը, աւելի ուշ ժամանակների գործ է:

(Վերջը միւս անգամ)

ՐԱՖՖԻ ՄԱՏԱՐԱՆԸ

Անցեալ կիրակի, սեպտ. 27-ին, Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը հաւաքւել էր բաւականի բազմութիւն, որ եկել էր ներկայ լինելու Րաֆֆիի մահարձանի բացման: Ամենքի հետաքրքրութեան չափ չկար: Հայ ժողովուրդը սրբատաւորի առաջ էր գնում գերեզման ուքարերի կողքերով զէպի իր մեծ վիպասանի շիրիմը, ներկայ լինելու մահարձանի բացման հանդիսին: Բայց որքան եղաւ բոլորի զարմանքը, երբ տեսան, որ մահարձանը առանց ծածկելու արդէն բացւած է, այն էլ առանց ճառախօսութեան և առանց մի երկու խօսքի: Մեր կարծիքով, վատ չէր լինիլ, եթէ մահարձանը ծածկւած լինէր քողով և բացւէր նա միայն հանդիսի ժամանակ: Մահարձանը ներկայացնում է մի մարմարէ սիւն եօթն արշ. բարձրութեամբ, ծայրին մի փոքրիկ քնար: Սիւնի ճակատին քանդակւած է մի պսակ, որի մէջ տեղը գրած է Րաֆֆի, իսկ պատանդանի վրայ փորագրւած է «Ձայն տուր, ով ծովակից» մի տուն: Մեզ թոյլ ենք տալիս նկատելու, որ Րաֆֆիի նման հռչակաւոր գրողի շիրմին վայել չէ մի այդպիսի հասարակ արձան, քանի որ Խոջիվանքում դրանից աւելի շքեղները կան զանազան անյայտ մարդկանց գերեզմանների վրայ: Համեստութիւնն իսկապէս լաւ բան է, բայց այս դէպքում միանգամայն անտեղի: Մեր կողմից մինչև անգամ անհամեստութիւն է Րաֆֆիի յիշատակին այդպիսի չնչին բաներ նւիրելը: Խոջիվանքում, ուր թաղւած է Րաֆֆին, պիտի կառուցւէր մի մահարձան, որ իր շքեղութեամբ և վառահիղութեամբ աչքի ընկնէր միւս հասարակ մահկանացուների արձաններից: Իսկ այժմեան մարմարէ սիւնը և դրա նմանները, իբրև երկրորդական արձաններ, կարելի է կառուցանել ուրիշ հայրենական տեղերում: Րաֆֆիի մահարձանի չանձնաժողովը, որի նախագահն է պ. Գաբրիել Միրզոյեանը, լրագրներում իր տպած նամակով մեզ դրում է հասարակութեան վրայ, այն հասարակութեան, որ իբր թէ դրամական միջոց չէ տւել արժանավայել և վառահեղ արձան կառուցանելու պօէտի շիրմի վրայ: Ճիշտ է, արժանավայել մահարձան կառուցանելու համար հանգանակած դումարը շատ չնչին էր, բայց ինչով բացատրենք չանձնաժողովի տասն տարւայ անգործունէութիւնը? Չանձնաժողովը, իր յոյսը դնելով հանգանակած փոքրիկ դումարի %%-ի վրայ, ամբողջ տասն տարի անգործ է մնացել և, մոռանալով իր չանձն առած պարտականութիւնը, չի հոգացել նորանոր դրամական աղբիւրներ գտնելու և այդպիսով բազմապատկելու հաւաքած դումարը:

Հաւաքած դումարը բազմապատկելու համար կարելի էր ձեռք առնել հետևեալ միջոցները. a) լրագրներն միջոցով շարունակել հանգանակութիւնը, b) առանձին նամակներով դիմել հարուստների և մեր խոշոր կապիտալիստների օժանդակութեան, c) տալ պարահանդէսներ և ներկայացումներ և d) հրատարակել Րաֆֆիի դրւածքները ու էժան գնով տարածել ժողովրդի մէջ: Սակայն մեր չանձնաժողովը միայն տահմանափակւել է տասն տարի սրանից առաջ արած կոչով. իսկ յետոյ, երբ դեռ միայն մի չնչին գումար էր հանգանակւած, չանձնաժողովը դիմեց հարտարապետներին կազմելու մահարձանի նախագիծը, խոստանալով լաւագոյն նախագծի համար մրցանակ (ի հարկէ, այդ չնչին գումարից): Եւ այդ հանգամանքների շնորհիւ, այսօր մեր հայր-վիպապրի շիրմի վրայ տեսնում ենք միայն մի հասարակ մարմարէ սիւն:

Յանկալի կըլինէր, որ ընտրըւէր մի ուրիշ աւելի գործունեայ և եռանդուն չանձնաժողով, որը ձեռնարկէր Րաֆֆիի արժանավայել մահարձանի կառուցման: Այժմեան մարմարէ սիւնը, իբրև երկրորդական արձան, կարելի է տեղափոխել մի ուրիշ տեղ, իսկ նրա տեղը, պօէտի շիրմի վրայ, կարելի է կառուցանել մի նոր մահարձան, որն իր շքեղութեամբ պատիւ բերէր մեծ գրողի յիշատակին և այն հասարակութեան, որին նա նւիրել էր իր ոյժերը, իր ամբողջ կեանքը...

Ե. Ֆ.

Հայկական թատրոն

Մեր անցեալ յօդւածում սոփեստութիւն անւանեցինք այն կարծիքը, իբր թէ հայը բանաստեղծական ձիրք չունի, բայց կանդ չ'առանք այդ կէտի վրայ: Ուստի այժմ մի փոքր կըպարզենք մեր միտքը.

Օպերայից երգչուհի

Բանաստեղծական ձիրքի հոգեբանական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այդ ձիրքը ինքն ըստ ինքեան մի անկախ, անջատուած, կըզգիացած զգացմունք չէ մարդկային հոգու մէջ, այլ նա բաղկացած է նոյն հոգեբանական տարրերից, որոնք առհասարակ բնորոշում են մարդկային կեանքը աւելի ստոր արարածների կեանքից (անասունների, բոյսերի և այլն)։ Նրբազգացութիւն, երևակայութիւն, սէր՝ իր անթիւ գունաւորութիւններով, վիշտ, ցաւ, յուզմունք, ցնծութիւն... Այդ հոգեկան դրութիւնները, կամ յատկութիւնները իրանց անթիւ ելևէջներով և աստիճաններով, իրանց բազմաթիւ համախմբութիւններով (կոմբինասիօններով) կազմում են մարդու հոգեկան աշխարհը, նրա իսկական կեանքը։ Ով իր կեանքում երբէք չէ վշտանում, չէ ցնծում, չէ յուզւում, չէ ոգևորւում, չէ յուսահատւում, չէ լցւում ցոյսերով, չէ սիրում և չէ ատում... կընշանակէ, որ նա առհասարակ չէ ապրում մարդկային կեանքով, այո, նա իսկի մարդ էլ չէ, այլ անասուն է... Կենդանիները միայն ուտել են զգում, միայն կիրք են զգում։ Աւելի նուրբ կենդանիները ունին և սիրոյ, վշտի և այլ բարձր զգացումներ, բայց այդ զգացումները մի տեսակ քնած, թմրած, մեռած դրութեան մէջ են։ Կենդանական աշխարհը մի թմրութիւն է ներկայացնում, որին մարդ նախանձել չէ կարող։

Մենք չենք հերքում, որ տակաւին մարդկային կեանքի մէջ էլ անասնական թմրածութիւնը շատ անգամ նշմարւում է։ Շատ ու շատ անհատներ կան, նոյն իսկ մեր այդպէս կոչուած ինտելիգենցիայի շրջաններում, որոնք, օրինակ, զուտ հոգեկան սիրոյ մասին գաղափար չունին, այլ իրանց կեանքի միակ ուրախութիւնը սեռական կարիքն է։ Սրանք չեն ոգևորւում ապագայ մարդավայել կեանքի պատկերներով... Բայց ոչ, ոչ, ոգևորւում են, խիստ ոգևորւում են, միայն թէ ապագայ կեանքը Մահմէդի դրախտ են երևակայում, ուր աւելն ինչ կենդրոնացած է հիւրիների շուրջը... Բայց այդպիսի ողորմելիները մարդկային կեանքի ներկայացուցիչներ չեն, այլ մսի ու սրտի հիւանդներ են, որոնց կարելի է խղճալ։ Իսկ մարդկային ցեղը ընդհանրապէս այն պիսի մի բարոյական զսպանակ ունի իր սրտի մէջ, որ նրան կանգուն է պահում և դէպի բարձրութիւն է մղում անընդհատ։

Ահա հէնց այդ զսպանակն է, որ իւրաքանչիւր բանաստեղծութեան հիմնական տարրն է կազմում։ Մարդկութիւնն իր ամբողջութեամբ վերցրած՝ բանաստեղծ է, որովհետև մարդը առհասարակ բանաստեղծ է։ Վերոյիշեալ ազնիւ հոգեկան զգացումներից զուրկ են միայն ապականած սրտերը։ Չիլլերը կարծում էր, որ աւազակը երգ չունի։ Իսկ մենք աւելի խիստ գաղափար ունինք այդ մասին. մեր համոզմամբ, ով որ երգ չունի, այսինքն հոգով բանաստեղծ չէ, նա իսկի մարդ էլ չէ... Երբ որ սիրտը բանաստեղծական տարրերից զուրկ է, նրա մէջ հեշտութեամբ բոյն են դնում անբարոյականութեան բացիլները... Իսկ բանաստեղծական ձիրքը մի կրակ է, որ հալում է հանքերը և զտում ոսկին ու արծաթը աւելի ստոր նիւթերից։ Կորած է այն անհատը, որի սրտի ծովում ալեկոծութիւններ տեղի չեն ունենում։ Կորած է այն ազգը, որ բանաստեղծական ձիրք չունի։ Բայց հայ ազգը կորած չէ, որովհետև նրա հոգու մէջ հանգած չէ տակաւին բանաստեղծական կայծը...

Ո՞վ կարող է այնպիսի սրբութեամբ սիրել, որպէս հայ կինը. ո՞վ կարող է այնպէս ոգևորել, որպէս ճշմարտութեան ծարաւ հայ երիտասարդը. ո՞վ կարող է այնպէս սրամիտ լինել, որպէս հայ մանուկը... Ո՞ւմ սիրտն է աւելի խորը վշտացած, քան սասունցու սիրտը. ո՞վ կարող է այնպէս յանդուգն լինել, որպէս հայ գործիչը... Ուրեմն կրակը կայ, վառօդը կայ, յարդը կայ, քամին կայ... Ի՞նչպէս կարող է այդպիսի դրութեան մէջ բանաստեղծական ձիրքը բացակայել։ Բայց ինչու՞ ենք հեռու գնում։ Ո՞վ է երգում այնպիսի ջերմ, բնական, սրտագրաւ հնչիւններով, որպէս կոյր հայ աշուղը... Եւրոպացի կոյրը նստում է բազմոցի մէջ և սպասում, որ կերակրեն իրան, կամ շատ-շատ ինքնասպանութիւն է գործում։ Իսկ հայ աշուղը չէ ստորանում, չէ վհատում, այլ կրծքին է սեղմում իր քաղցրահնչիւն քնարը, իր միակ սիրականը, և սար ու քոլ ընկած, անցնում է լեռներ, ձորեր, անտառներ... Նա թափառում է գիւղից գիւղ, քաղաքից քաղաք և ամենուրեք հնչեցնում է իր սրտաճմլիկ մեղեդիները... Եւ վերջապէս ով է աւելի գիտակցաբար և ազդեցիկ կերպով արտայայտել նորից բողբոջող ժողովրդի հոգիս զարթնած ցոյսերը, քան Փէշիկթաշլեանը և Գամառ-Քաթիպան։

Այդպիսի մի ժողովրդի համար ասել թէ, նա բանաստեղծական ձիրք չունի, կատարեալ անարդարութիւն է, զրպարտութիւն է, անգթութիւն է։ Այո, հայի սիրտը մի տեսակ խոպանացած, բրուացած է... Հայ վաճառականը շատ անգամ հրէական վաշխառուի տպաւորութիւն է անում։ Երկարատև անբնական դրութիւնը փոշոտել է հայի սիրտը, թմրեցրել է նրա հոգին, ժանգոտել է նրա քնարը... Բայց մի փոքր թարմ օդ, մի փոքր շնչառութիւն... և նրա պատկերը կըպայծառանայ իր բոլոր լուսաւորութեամբ... Այո, հայը դեռ ոչինչ չէ տեսել ընդհանուր մարդկութեան, դեռ նա չէ գցել իր լուման եւրոպական ընդհանուր դանձանակի մէջ...

Ամփոփելով մեր խօսքը, շեշտում ենք, որ հայը բանաստեղծական ձիրք ունի, իսկ հայի կեանքը շատ նիւթ կարող է տալ բանաստեղծական արտադրութեանց համար։ Շեշտում ենք, որ մասնաւորապէս դրամայի համար նոյնպէս մեր կեանքը բաւական պաշար ունի։ Դրաման «բանաստեղծական» գործողութիւն է պահանջում։ Հայի կեանքի մէջ դրամաներ շատ կան...

Ս. Թ.

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Պիտեմ զայրացած էք իմ դէմ, որ ձեզ մանրամասն նամակ չըդրեցի, ոչ Մոսկուայից Ազատարար Ալէքսանդր Կայսեր արձանի բացման մանրամասնութիւնները, ոչ Պետերբուրգից աւելի հետաքրքիր, այն սրտատրոփ լուրերի մասին, որ սպասում էիք։

Հեռագիրները հաղորդեցին ձեզ արձանի բացման հանդիսի նկարագրութիւնները։ Ինձ մնում էր միայն շեշտել այն անմահ արձանի առաջարկի վեհութիւնը, որ այդ օրը մեր Կայսրը արաւ։ Երախտապարտ Ռուսիան Նահապետ-Կայսեր մարմարիոն-բրոնզ ար-

ձան կանգնեցրեց, իսկ նրա Թագաւորը պսակեց այդ մի անթառամ կնիքով։ Ալէքսանդր II Կայսրը ստրուկ Ռուսիային տուաւ ազատութիւն, իսկ նրա Օգոստափառ Թոռը ամբողջ Եւրոպային առաջարկում է խաղաղութիւն։ Եւ չքաւոր ինչն է աւելի պանծալին, քան խաղաղութիւնը, որի բարերեր արդիւնքն է արդար աշխատանք և նրա անպորր վայելումը։

Պետերբուրգի ձեզ հետաքրքրող լուրերի մասին այժմս էլ չեմ աճապարում ոչ մի մանրամասնութիւն հաղորդել։

Հրատարակչական գործը Պետերբուրգումն էլ մխիթարական չէ։ Գրել էի «Всем. Ил.»-ի մասին, միւսներն էլ, մի երկու-երեքի բացառութեամբ, շատ մեծ զոհաբերութիւններով են առաջ ընթանում։

Վարշաւը հսկայական քայլերով է առաջադիմում, և շատ կարճ ժամանակում այդ քաղաքը թէ իր գեղեցկութեամբ և թէ մանաւանդ իր առևտրով հզօր մրցակից կըլինի Վիէննային։ Հաւական էժանութիւնն է։ Քաղաքի մի քանի փողոցները կատարեալ Վիէննային են նմանում։ Առանց լեհերէն իմանալու շատ դժւար է այստեղ։ Ինչ ասել կուզէ, որ շատ գովելի է մայրենի լեզուով խօսելը, բայց բոնի կամենալ, որ իւրաքանչիւր մարդ, օտարական, ճանապարհորդ խօսէ տեղական լեզուով, այդ կատարեալ թըթու ազգասիրութիւն է։ Սակայն երբ համոզւում են, որ բոլորովին մի բառ անգամ չէք հասկանում լեհերէն, խօսում են ֆրանսերէն և ռուսերէն։ Կառապանները բոլորն էլ համարեա խօսում են ռուսերէն, կարդալ գիտեն, լաւ ճանաչում են փողոցները և մի տասը հասցէ միանգամից ասելով, հասկանում են, միտներում պահում և շատ բարեխղճութեամբ (երբ կառքը ժամով էք վերցրել) տանում են մօտիկ և յարմար փողոցներով։ Մի բան, որ թէ Մոսկւայում և թէ մեր Թիֆլիսում այդպէս չէ։

Վարշաւը միանգամայն առաջադիմութեան, բուն քաղաքակրթութեան ուղիի վրայ է և արժանի ուշադրութեան։

Մինչև Բերլին Վարշաւից ճեպընթացով մօտ 12 ժամ ճանապարհ է։ Բերլինը նոյնպէս վերթխարի քայլեր է անում. տասը տարի առաջ և այսօր շատ մեծ տարբերութիւն կայ։ Քաղաքը բաւական դեղեցկացել է։ Շատ նոր կամուրջներ են շինել։ Նոյն իսկ երկու տարի առաջ և այսօր շատ բեւեռ փոփոխութիւն է նկատւում։ Մարդիկ մեայն մնացել են նոյնը, կապիտ, ժլատ, կոպէկին նշանակութիւն տուող։ Մի գործարանում պատւէր տւի մօտ 3000-ի մարկի պատկերներ և ի միջի այլոց խնդրել էի մի քանի ուրիշ ֆիրմաների հասցէներ։ Ինչ էք կարծում, խնդիրս կատարում են, հասցէները ստանում եմ պոստով և հետն էլ 70 pfg. (33 կոպէկ) հաշիւ, որ ծախսել են պոստի մարկայի, գրաբերի և նմուշ ուղարկելու համար։ Այդ աստիճան մանրակրկիտ, նոյն իսկ ծռուճշտապահութիւն, թէ հաշւապահութիւն, գոնէ ինձ համար, տարօրինակ է երևում։

Հրատարակչական գործը Բերլինում այժմ Եւրոպայում առաջին տեղն է բռնում։ Վիլհելմ կայսրը իր ճառերից մէկում ասել է, որ Բերլինը պէտք է աշխարհքի բոլոր քաղաքներից գերազանցէ իր ներքին, մտաւոր և արտաքին կազմակերպութեամբ,—տեսնենք։

Անցեալ օրը օպերայումն էի. տալիս էին Բիչարդ Ժողովրդական կեանքից Վագների օպերան։ Իսկ երէկ օպերայի շինութեան մէջ սքանչելի Սիմֆոնիա էր, մասնակցում էր Բերլինի կայսերական թատրոնի երաժշտական խումբը։ Պրոգրամը շատ լուրջ, Բեթհովեն, Մոցարտ և այլն։ Ամիսը մի անգամ օպերայի շինութեան մէջ տրւում են այդ տեսակ սիմֆոնիական երեկոյթներ, որ մի երկնային հաճոյք է պատճառում լսողին։ Չայկովսկու Եվգ. Օնեգինէ-ը մասնաւոր թատրոնում ներկայացնում է։ շատ յաջող։ Լիքն է լինում մեշտ և բերլինցիք մեծ յափշտակութեամբ են խօսում Չայկովսկու տաղանդի մասին ու շատ հաւանում են Եվգ. Օնեգին-ին։ Հետաքրքրութեան համար ես էլ գնացի մի երեկոյ։ Ողբերս նստողները մեծ հաճոյքով խօսում էին և շատ հաւանել էին մանաւանդ վայսը, մազուրկան։ Վաղը ուղևորում եմ Իտալիա։

Բադաւես

Ինչու են մարդիկ անձնասպանւում

«Տարազի» 36 համարի լուրերի շարքում, Էջմիածնայ սինոդի անձնասպանների թաղման վերաբերմամբ մի կարգադրութեան առիթով մենք կարդում ենք խմբագրութեան հետեւեալ կարծիքը. «Բոլոր անձնասպաններն էլ շատ թէ քիչ խելացող գրութեան մէջ են, որովհետև խելքը գրկխին մարդը երբէք ինքնասպանութիւն չի գործիլ»։ Թէ որքան իրաւացի է այդ նկատողութիւնը, ցոյց կըտան այն բոլոր տեղեկութիւնները, որ հաշւած են մի կողմից հասարակագէտները և միւս կողմից բժիշկները և հոգեբանները։

Արդէն Brierre de Boisemont Esquirol և Falret կարծում էին, որ ինքնասպանները խելագարներ են. այդ կարծիքը շատ հեշտ է պաշտպանել, եթէ աչքի առնենք թէ որքան դըժւար է որոշել խելագարութեան սահմանները. մեղնից ամեն մէկը քանի քանի անգամներ գտնւած է այնպիսի վայրկեանների մէջ, երբ մեր բանականութիւնը հրաժարւում է մեզ ծառայել... Այդ կարծիքն է պաշտպանում նոյնպէս պ. Durxhein իր Juicide անունով գրւածքի մէջ, աւելացնելով որ այդ հիւանդութիւնը բժշկելի է, եթէ մի քանի պայմաններ իրագործուին կեանքի մէջ, որոնց հետևանքը կըլինի ամրացնել կամքի ոյժը, որ տարաբաղտաբար ներկայ հասարակական պայմանների մէջ քանի գնում՝ այնքան քայքայւում է. անձնասպաններն թիւը շատանում է, մենակ Ֆրանսիայում տարեկան 8—900 հոգի զոհ են գնում այդ հիւանդութեան։

Եթէ առանձին առանձին վերցնենք՝ անձնասպանութիւնների շարժառիթները շատ բազմատեսակ են։

Մէկն ինքնասպանութիւն է գործում մառախլապատ եղանակի ազդեցութեան տակ։ Միւսն ընդհակառակը արեգակի պտճառով. եթէ առաջինը արդարացնում է Montesquieu'ի գրութեան երկրորդ դէպքը, քարուքանդ անելով առաջինի ենթադրութիւնները, արդարացնում է իտալական գիտնականների Ferri և Morseli կարծիք-

ները. տաքութիւնն աւելացնում է ջղերի գրգռականութիւնը—չէ որ բոլոր յեղափոխութիւնները ամառն են տեղի ունենում և քանի որ ամառը մարդ աւելի է տաք, քան այդ պահանջում է օրգանիզմը, վերջինիս մէջ առաջ են գալիս աւելորդ ոյժեր, որ պէտք է գործադրել մի որև է կերպ։ Այդ աւելորդ ոյժի գործադրութեան մի տեսակն էլ ինքնասպանութիւնն է, որ զարմանալի կերպով հանգստացնում է հիւանդին։

Մէկն ինքնասպանութեան է դիմում կարողութիւնը կորցնելու պատճառաւ, երկրորդը—սիրականը. մէկը զաւակ չունենալուն, միսը մի քանի հատ ունենալուն համար, որոնց մանկական ստամոքսները ուտել են պահանջում, հայրը ոչինչ չունի նրանց բերանը դնելու համար. մէկն ինքնասպանութեան է դիմում ամօթից ազատելու համար (զօրապետ Բանրի), երկրորդը ներշնչուած Նիցշէի փիլիսոփայութիւնից և այլն և այլն։

Վերջերս Պարիզի մէջ կարողութիւն ունեցող մի կին ինքնասպանութեան դիմեց, վախենալով ձմեռուայ գալուց և ցուրտից։ Մէկ ուրիշ դէպք, որ պ. Varigny անձամբ ճանաչում էր. «մի երիտասարդ կին էլ ինքնասպանութեան է դիմել յուսահատուած, որ չի կարող մայր լինել»։

Ինչպէս միացնել այդ բոլոր առիթները, որոնցից օգտուում են մեր հիւանդ ընկերակիցները իրանց կեանքից ազատելու համար։ Ո՞րն է այդ հոգեկան երևոյթների նիւթական կամ աւելի լաւ է ասել՝ կենսաբանական պատճառը։

Պ. Haig, որ յայտնի է իբրև Անգլիայի հեղինակաւոր յոյիչներից մէկը, անգլիական բժշկական միութեան ժողովների մէջ կարդաց մի աշխատութիւն, որ հետաքրքիր է համառօտել։

Պ. Haig կարծում է, որ ինքնասպանութիւնը հետևանք է մի շարք սխալների մեր սնունդի առողջապահութեան մէջ։ Առաջն ասում է. «Ասա, ինչ ես ուտում, ասեմ ով ես դու»։ Պ. Haig-ը ուղղում է ասելով. «Ասա, ինչ ես ուտում, ասեմ ինչ պիտի անես դու»։ Այդ երկու լսմբագրութիւնների մէջ չկայ հակասութիւն։

Մարդ ինքնասպանութեան է դիմում շնորհիւ ուղեղի արեան շրջանառութեան խանգարման. այդ խանգարումները մեծ մասամբ քիմիական են։ Ուղեղը, ինչպէս և ամբողջ օրգանիզմը ստանում է քիմիական տեսակէտից կեղտոտ արիւն, հարուստ բնամիզային թթուով (acide Urique) և բնամիզային աղերով (Urate)։ Իսկ այդ երևոյթը տեղի է ունենում, շնորհիւ մեր կերակուրների մէջ կենդանական աշխարհից չափազանց նիւթեր մըտցնելուն. չափից շատ միսը և թէյն է, (մի՛ք մոռանալ, որ լսօսքը անգլիացիներին է վերաբերում), որոնք պատճառ են լինում ինքնասպանութիւնների։

Բնամիզային թթուն, առաջ է գալիս բորակածային (Azoté) նիւթերի և գլխաւորապէս մսի, օրգանիզմի մէջ ենթարկուած քայքայման և ուրեմն որքան շատ միս ուտենք՝ այնքան շատ կըլինի մեր արեան մէջ բնամիզային թթուն։ Ահա համառօտապէս պ. Haig-ի քարոզածը։

Առաւօտները (կէս գիշերից մինչև կէսօր) արեան մէջ բնամիզային թթուն աւելի շատ լինելուն համար, ինչպէս և ամառները, ինքնասպանութիւնների թիւը շատանում է։ Տղամարդկանց արիւնը աւելի շատ բնամիզային թթու է պարունակում, քան թէ կանանց, ուստի և առաջինների մէջ ինքնասպանների թիւը աւելի շատ է քան վերջինների։

Զարունակ նոտած կեանք վարողների արիւնն աւելի հարուստ է բնամիզային թթուով քան շարունակ շարժման մէջ գտնուողները. առաջինները աւելի շատ են ինքնասպանութիւն գործում։

Մէկ լսօսքով այն բոլոր պայմանները, որոնք աւելացնում են բնամիզային թթուի քանակութիւնը, նպաստում են ինքնասպանութեան զարգացման, և քանի որ բնամիզային թթուն աւելանում է արեան մէջ, մսի բորակածային մարմինների շատ գործածութեան և փիլիսոփայական աշխատանքի պակասութիւնից՝ բնական է, որ այդ երկու պայմանները կանոնաւորելով՝ կարելի է զգալի կերպով ինքնասպանութեան առաջն առնել։

Բայց տեսէք, կան ամբողջ դասակարգեր, որ չընայելով թէյ երբէք չեն գործածում և միայն լսում են շատ շատ շաբաթը մի անգամ, ինչպէս Իտալիայում—մինչդեռ ինքնասպանութիւններ շատ յաճախ են տեղի ունենում։

Բանակներում, ուր ոչ շատ ուտել կայ և ոչ էլ անշարժութիւն, աւելի շատ է ինքնասպանութիւն տեղի ունենում. մինչդեռ վանքերում, ուր շատ ուտելուց և անշարժութիւնից աւելի ոչինչ չկայ—չկայ այնքան ինքնասպանութիւն։

Թէև պ. Haig'ի դրութիւնը չեն բացատրում բոլոր երևոյթները, բայց նա պարունակում է իր մէջ մի որոշ աստիճանի ճշմարտութիւն։

Ամբողջ մարդկութիւնը կարծես թէ իբր դաւանանք ընդունած է, որ միայն միսն է սննդարար կերակուրը և այդ մեծամասնութեան կարծիքը մի կոպիտ սխալ է։

Միսը, ինչպէս բոլոր այդ տեսակ մարմինները, ինչպէս պանիրը, գլխաւորապէս ծառայում են մարդկային մեքենայի մաշած նիւթական մասերի վերանորոգման. նա կարկատում է պակասները և պահպանում հաւասարակշռութիւնը, բայց այդ նպատակի համար մեզ քաղաքացիներիս համար շատ քիչ նիւթ պէտք է, քանի որ մեր օրգանիզմի նիւթական կորուստը շատ չէ։ Ուստի պէտք չէ շատ միս ուտել, որի պակասը պէտք է լրացնել կաղամբով, հատիկներով և շաքարով։ Այդ նիւթերը չեն ծառայում ինչպէս աւաջինները օրգանիզմի նիւթական վերանորոգման, այլ մեքենային վառելու նիւթի տեղ են ծառայում. այդ նիւթերն են, որ մարդուս մէջ տաքութիւն են առաջ բերում, իսկ վերջինիս միջոցով կարողանում են մտածել և շարժել. իսկ ներկայ հասարակական պայմանները փոքր ծաւալի մէջ մեծ ոյժ են պահանջում։ Չըլինի թէ մեր ընթերցողը մեզ բուսակերների տեղ ընդունի. քաւ լիցի. բայց առանց բուսակեր լինելու մենք խորհուրդ կըտանք, քիչ միս ուտել և շատ կաղամբ. այդ խորհուրդն էլ մի որոշ կերպով պէտք է սահմանափակել միայն առողջների համար, մինչդեռ հիւանդները չըպէտք է դեկավարուեն լրագրական յօդուածով, այլ իրանց մըշտական բժշկի խորհրդով։

Այժմ վերադառնանք մեր հարցին։ Պարզ է, որ ինքնասպանների քիմիական կազմութեան մէջ տեղի են ունենում այնպիսի փոփոխութիւններ, որ նրանց անմիջապէս կարելի է

հիւանդների շարքը դասել։ Այդ փոփոխութիւնները կարող են առաջ եկած լինել անտեղի սնունդից, ինչպէս և հոդեկան ցնցումների ազդեցութեան տակ (Crasset), որոնց հետեւանքն է լինում ընդհանուր ջղային դրութեան խանգարումը։

Բնական է, որ սնունդի կանոնաւորութիւնը զգալի, թէև կոմնակի կերպով, կարող է ազդել այդ հիւանդութեան վրայ։ Տիկին Hart (անգլիացի) ասում է «Մենք անգլիացիքս միս շատ ենք ընդունում, դրա համար շատ դիւրագրգիռ բնաւորութեան տէր և անտանելի ենք մեզ շրջապատողների համար. եթէ միս քիչ ուտենք և շատ կաղամբ, մեր բնաւորութիւնը կըմեղմանայ. հեզութիւնը, որ անխուսափելի կըլինի, աւելի կըքաղցրացնէ մեզ համար կեանքը և մենք աւելի ուժով կըկապւենք կեանքի հետ»։

Այդ նկատողութեան սրամտութիւնը հաստատում է, թէ որքան նա ճշմարիտ է։

Ռ. Ե. Մ.

Բաքվի գետեզմանի վրայ արձան կանգնեցնելու համար ընտրուած յանձնաժողովից

1888 թ. ապրիլի 24-ին վախճանուեց Բաֆֆին։ Յանձնաժողովս, որ ընտրուեց հանգուցեալ վիպասանի մահից յետոյ՝ նրա յարգողների շրջանում, սկսեց իր գործունէութիւնը ընդհանուր ստորագրութիւն բանալով, սակայն ստորագրութիւնը, որ սկզբում բաւական յաջող գնաց, դեկտեմբերի 21-ին, 1888 թ., ընդհատուեց ու այնուհետև յանձնաժողովս ոչ մի կոպեկ չէ ստացել։ Ստորագրութեան ամբողջ արդիւնքն էր 1019 ր. 31 կ., որից մի քանի մանր ծախսեր դուրս եկած՝ (48 ր. 5 կ.) մնաց առ 1 փետրուարի 1889 թ. 971 ր. 26 կ.։

Յանձնաժողովս իրան նպատակն էր դրել Բաֆֆիի գետեզմանի վրայ կառուցանել անմահ վիպասանի անուան վայել փառաւոր մահարձան։ Յանձնաժողովին չէր վհատեցնում հաւաքած աննշան՝ 971 ր. գումարը, բայց որքան էլ աշխատեցինք, բոլորը ի գուր. շատ տեղեր և շատ անձանց ենք դիմել, բայց ապարդիւն... Այդ անաջողութիւնը մեզ մնում էր բացատրել վերջին տասն տարւայ ընթացքում հայերի մէջ տեղի ունեցած աղետներով. մի հասարակութեան մէջ, որտեղ անընդհատ տիրում էին իրար ետևից՝ սով, խոլերա, գաղթականութիւնից առաջացած բարդ պահանջներ, ի հարկէ դժւար էր նոյն իսկ Բաֆֆիի մահարձանի համար նւէրների սպասել...

Յանձնաժողովս իր ժամանակին նոյնպէս յայտարարեց մրցանակաբաշխութիւն մահարձանի նախագծի համար։ Նշանակւած ժամանակին ստացուեցան պրօէկտներ, որոնցից միմիայն մէկը ճանաչւեց համեմատաբար ամենայաջող, որի հեղինակին՝ Արշակ Սալամբէգեանին՝ ուղարկւեց երկրորդ մրցանակ—100 ր (76 կոպէկ պոստի ծախս), սակայն վերջին պրօէկտն ևս չէր համապատասխանում լիովին յանձնաժողովի ծրագրած պահանջներին նախ՝ և երկրորդ՝ այդ պրօէկտը իրագործելու համար հարկաւոր էր մի գումար, որ չունէր յանձնաժողովս։ Վերջինիս մնում էր—տարիներով ըսպասել, որպէս զի իր ձեռքին եղած գումարին 870 ր. 56 կ. (971 ր. 26 կ.—100 ր. 70 կ.) աւելանալին %% և գոյանար գոնէ այնչափ, որ հնարաւոր լինէր մի համեստ մահարձան կանգնեցնել հայ հասարակութեան պատճառած վիպասանիին։ Եւ իրաւ՝ այս տարւայ փետրւարի 1-ին, այդ 870 ր. գումարին աւելանալով իննն տարւայ %%, ստացած սկզբում Թիֆլիսի Առևտրական բանկից, ապա Թիֆլիսի Կրեդիտային բանկի հազար րուբլիանոց օբլիգացիայից, այն է՝ 465 ր. 37 կ.՝ մայր գումարի հետ ի միասին կազմւեց 1335 ր 87 կ.։

Յանձնաժողովս կըշարունակէր ըսպասել, եթէ ժամանակը ներէր։ Մահւան տասնամեակին արդէն ժամանակ էր կառուցանել այն, ինչ հնարաւոր էր՝ եղած միջոցներով։ Մեր ընկերակից անդամ նկարիչ Հաշինջաղեանը օգնութեան հասաւ և իր շնորհալի նախագիծն առաջարկելով, յանձնաժողովին հանեց նեղ դրութիւնից։ Յանձնաժողովս միանգամայն հաւանութիւն տւեց յիշեալ նախագծին, շնորհակալութեամբ ընդունելով այդ նւէրը, յանձնարարեց մասնաժողովի անդամներ՝ Գ. Միրզոյեանին և Գ. Հաշինջաղեանին ի կատար ածել այդ նախագիծը։

Այսօր մահարձանն արդէն պատրաստ է. մօտ եօթ արշին բարձրութիւն ունեցող մարմարեայ սիւնը, զարդարւած հայկական օրնամենտներով, գրաւում է իւրաքանչիւրի ուշադրութիւնը։ Մահարձանը պատրաստել է յայտնի վարպետ Անդրիօլետտին, որին վճարւած է 1200 ր. և վանդակապատ տակի քարերի համար վճարւած է քարտաշ Գասպար Յարութիւնեանին 135 ր.։ Հայ հասարակութեանը մնում է աւարտել գործը, շինել տալով գոնէ թեթև վանդակապատ, որի վրայ կըծախսւի մօտաւորապէս 400 րուբլի։

Թէև իր ժամանակին մենք տպել էինք մեր հայ լրագրներում մեզ հասած բոլոր գումարների հաշիւը, այնուամենայնիվ աւելորդ չենք համարում այս ր կրկնելու նոյնը։

1888 թ. Աբէլեան եղբայրներից 10 ր., Ռոձապաճի միջոցով. 1) Յարիցինի հայերից—43 ր. (տ. Ռոձ. № 21), 2) Կուկիայի Թանդոյեան ճեմ. դպրոցի ուսուցիչներից—12 ր. (տ. Ռոձ № 21), 3) Դորուց—13 ր. 60 կ. (տ. Ռոձ. № 24), 4) Պետերբուրգից պ. Քր. Հաշինջաղեանի միջոցով—50 ր. (տ. Ռոձ. № 27), 5) Ասխաբադից—30 ր. (տ. Ռոձ. № 50); Նոր-Նախիջևանից պ. Ստ. Տէր-Կարապետեանից—10 ր., Նոր-Հայազէթից պ. Յ. Մամիկոնեանի միջոցով—26 ր. 33 կ., Մերւից պ. Ջիրվանզադէի միջոցով—33 ր. (տ. Ռոձ. № 27), Մարսէլից պ. Չէօլեբեանի միջոցով—18 ր. 88 կ., Հաշտարխանից Նոր. սրբազն. Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանի միջոցով—107 ր., Նոր-Դարի միջոցով՝ 1) Գորուց 6 ր., 2) Նոր-Նախիջևանից 19 ր. (նաև 19 ր. գրքերի հրատարակութեան համար)։ Մոսկւայից պ. Ժամհարեանի միջոցով 563 ր. 50 կ., Ազդաշից պ. Ազատսարեանի միջոցով 12 ր., Վերին-Սգուլիսից պ. Ս. Չախնազարեանի միջոցով—57 ր., Պետերբուրգից Արիստակէսեանից 3 ր. և Բաֆֆիի այրւի միջոցով Ազ. Հաղթասարեանից 5 ր., ընդամենը—1019 ր. 31 կոպ.։

Ծախս.—Ժամանակաւոր վանդակապատ 30 ր., նամակներ տպելու, հեռագիրների, 71 հատ պոստի մարկայի և այլն—18 ր. 5 կ., Արշակ Սալամ-

բէկեանին մրցանակ պոստային ծախսով 100 ր. 76 կ.—ընդամենը 148 ր. 81 կ.։

Մուտքից ծախսը հանած՝ 1019 ր. 31 կ.—148 ր. 81 կ.=870 ր. 50 կ.։ Վերջին դումարին աւելացրած %%—465 ր. 37 կ., գոյացաւ 1335 ր. 87 կ., որ լիովին արդէն ծախսած է։

Ի դիմաց յանձնաժողովի՝

Դաբրիէլ Միրզոյեանց

3. Գ. Դժւար է հաւատալ, բայց փաստ է, որ Թիֆլիսը, Բագուն (բացի Աբէլեան եղբայրներից), Երևանը, Ալէքսանդրապոլը, Ախալցխան, Գանձակը—ոչ մի կոպեկ չեն նուիրել Բաֆֆիի մահարձանի համար...

Գ. Մ.

ՄԱՀՀԱՅՈՒՅԱԿ

Պրոֆէսոր Անդրէաս Առծրունու թաղումը

—

Սեպտեմբերի 29-ին երեկոյեան Գերմանիայից Թիֆլիս բերեցաւ Ախէնի պոլիտեխնիկումի պրոֆէսոր Անդրէաս Առծրունու մարմինը։

Պագաղի վրայ դրած էին շատ պակներ Գերմանիայի զանազան ուսումնական ընկերութիւններից։ Պագաղի հետ եկել էր Գերմանիայից եւ իր աշակերտներից մէկը, ով է Դօսէլիայի, որ ուսանում է Ախէնի պոլիտեխնիկումում։ Մարմինը նոյն օրը տիխապրեց Նոշիվանիի գերեզմանատան մատուռը եւ միւս օրը կատարեցաւ թաղման կարգը։

Զննելով այդ օրւայ ցոյցի եւ անեանների բանում, թաղումը եկել էին տեղական հայ եւ ռուս մտաւորականների ներկայացուցիչներ, ակի ընկնող գրողներ եւ բազմաթիւ բազմութիւն յարգողներից։ Դամբանական ճառեր խօսեցին Ս. Գալուստեան եւ Ա. Ռոսինեան։ Հանգուցեալի ցանկութեան համեմատ, համեստ կերպով կատարեց թաղումը եւ *Մշակի* խմբագրութիւնը յայտարարել էր, որ չեն ընդունի պատ՝ ներ։ Շիրմի պակ էր դրած *Մշակից* եւ բարձ ծաղիկներ ափսեցին գերեզմանի վրայ։ Նա թաղուեցաւ իր եղբօր, Գէորգ Առծրունու կողքին եւ բոլոր թաղման ներկայ եղողները տխուր, սրտամաշուկ յուզմունքով հանգիստ մաղթեցին պրոֆեսորի անհիշին։

Նոր ստացած գրքեր

—

1. «Ազգագրական Հանդէս», պատկերազարդ. երկրորդ տարի, գ. գիրք. 1898—№ 1.

Ազգագրութեան նիւթած մասը բռնում է շուրջ 400 երես, իսկ մարգարանութեան մասը 79 երես։ Զարդարուած է 28 յաջող և անյաջող պատկերներով։ Թէև հաշուով տարին հազիւ մի հատոր է լոյս տեսնում, սակայն չէ կարելի չբերախտանալ պ. Ե. Լալայեանցի ջանքերը, որ չի խնայում հետզհետէ նոր նիւթերով և պատկերներով ճոխացնելու իր հրատարակութիւնը։

Տարին երկու գրքի բաժանորդագինն է 3 ր։ Տպագրուած է Մ. Թօխինեանցի տպարանում, բաւականին լաւ թղթի վրայ։

2. «Մարդ եմ» (Homo sum), Գ. Էբերսի. գերմաներէն բնագրից թարգմանեց Ստ. Մալխասեանց. Հոչակաւոր հեղինակի սոյն հայերէն թարգմանութիւնը բաւական ազատ է անհարթութիւնից և կարգացւում է հեստաքրքրութեամբ։ Գիրքը մէջտեղ է, բաղկացած 428 երեսներից, գինը՝ 1 ր., տպուած է Մ. Թօխինեանցի տպարանում ոչ շատ խնամքով։

3. «Կենդանի՞ ե արդեօք» Մ. Վ. Արխանգելսկայայից թարգմանութիւն, նւէր մանուկներին։ Բաւական մաքուր, լաւ թղթի վրայ հրատարակութիւն է, խրատական բովանդակութեամբ։ Թարգմանութիւնը յաջողակ է, չը-նայելով մի-երկու անհարթութիւններին, օր. «գնաց դէպի տուն» (6 եր.) պէտք է լինի «գնաց տուն», «լաց եղաւ դառն արտասուքով» (7 եր.)՝ պէտք է լինի «լաց եղաւ դառն արտասուք թափելով»։

Այս տեսակ հրատարակութիւնը 8 կ.՝ շատ էժան է։ Տպագրուած է Կ. Մարտիրոսեանցի տպարանում։

4. «Այգեթիւական օղեգործութիւն» Յ. Պետրոսեանի, հրատ Թիֆ. Ն. հրատ. ընկերութեան։ Այս աշխատութիւնը մի լաւ ձեռնարկ կարող է լինել օղեգործութեամբ պարապողների համար։ Որովհետև իւրաքանչիւր նահանգի համար առանձին օրէնքներ են սահմանուած, աշխատասիրողը օղեգործներին դիւրութիւն տալու համար նորմաներով ոգիւսակ է կազմել և իր աշխատութեան գործնական գոյն տալ։ 107 միջադիր երեսներից բաղկացած այս գրքոյկն արժի, 40 կ., որ շատ թանգ է։ Այդ տեսակ օգտակար գրքոյկներին պէտք է աւելի էժան դին նշանակել։

Տպագրուած է Կ. Մարտիրոսեանցի տպարանում, լաւ թղթի վրայ։

5 «Կալենդարի այգում» Ի Յօհ-Վիլդէնբրուխի։ աւանդութիւն. Թարգմանեց Տաճատ քահանայ Մարտիրոսեան (արտ. Նոր-Դարից)։ Հեղինակը Ներոնի ժամանակից մի սրտառուչ աւանդութիւն է վերցրել, որը ընթերցողի վրայ խոր տպաւորութիւն է թողնում։ Թարգմանութիւնն էլ վատ չէ։ Տպագրուած է Մ. Զարաճէի տպարանում. 70 միջադիր երեսից, ոչ հասարակ թղթի վրայ տպուած, գինը 20 կոպ՝ էժան է։

—

Գրական նորութիւններ

—

Սեպտեմբերի 26-ին Լիսաբոնում (Պորտուգալիա) տեղի ունեցաւ մամուլի ներկայացուցիչների միջազգային կոնգրէս, նախագահութեամբ թագաւորի։ Կոնգրէսին մասնակցում էին նաև թագուհին, մինիստրները և դիպլոմատիական կորպուսը։ Կոնգրէսի անդամներից ներկայ էին 170 հոգի։ Ողջունաբեր ճառը արտասանեց ինքը թագաւորը, որին պատասխանեց մասնաժողովի նախագահը։ Նոր նախագահ ընտրուեց Վիլհելմ Զինգէր, «N. Wien Tagblatt»-ի խմբագիրը։

Հետևեալ կոնգրէսը տեղի կ'ունենայ Հռոմում, իսկ յետոյ կըլինեն ժողովներ Ջէէյդարիայում, Կարլսբադում և Հայդելբերգում։

— Բժիշկ Տւորեանովիչը բժշկականութեան դոկտորի աստիճան ստանալու համար, Պետերբուրգում մի դիսերտացիա է ներկայացրել, որի խորագիրն է «Հայերի մարդաբանութեան մասին նիւթեր»։ Հեղինակը իր աշխատութեան մէջ խօսում է Հայաստանի մասին, ծանօթացնում է հայոց պատմութեան հետ, առաջ բերելով ազգագրական վարևոր տեղեկութիւններ։ Տւորեանովիչը օգտւել է Նազէժդինի Խուդաբաշեանի և այլոց գործերից։ Նրա այդ գործը մի ամփոփ աշխատութիւն է և առանձին կարևորութիւն է ներկայա-

ցնում հայոց մարդաբանութեան մասին։

—«Нов. Обозр.»-ի ասելով, տ. Ե. Նադիրեանը ցանկութիւն է յայտնել 3,000 րուբլի նուիրել, այդ փողերով հրատարակելու համար պ. Ազ. Երիցեանի եռահատոր մի աշխատութիւնը՝ «Հայոց կաթողիկոսութիւնը 19-րդ դարում» անունով։ Դիրքը ամբողջապէս նուիրուած է Ներսէս Ե. աշտարակեցու կաթողիկոսութեան ժամանակամիջոցին։ Տիկնոջ հանդուցեալ ամուսինը (Ս. Նադիրեանց) Ներսէս կաթողիկոսի հաշուով է ուսում առել և աւարտել համալսարանը։

Դպրոցական

Լրագիրների վերջին տեղեկութիւններից երեւում է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան արդիւնաբերական դպրոցների բաժնի կառավարիչ գաղտնի խորհ. Անոպովի եռանդուն աշակցութեան շնորհիւ ենթադրութիւն կայ պոլիտեխնիկումը բանալ Կովկասում։ Ինչպէս յայտնի է, մի քիչ առաջ պոլիտեխնիկումը Կովկասում բանալու հարցը մերժուած էր։

—Կերակի, սեպտ. 27-ին Թիֆլ. Միրայէլեան տեխնիքական դպրոցում տեղի ունեցաւ տարեկան ակտ։ Դպրոցի կառավարչի կարդացած հաշուից երեւաց որ դպրոցը մտնել ցանկացողների թիւն եղել է 84 հոգի, որոնցից ընդունուել են միայն 28 հոգի։ Այժմ 75 աշակերտներ են սովորում։ Դպրոցում շինուած է հանրակացարան 50 հոգու համար, որտեղ այժմ բնակւում են 28 հոգի։ Այդ շինութեան վրայ ծախս եղել է 20,000 րուբլի։

Լ ո ւ ր ե ր

—

Կովկասի Կառավարչապետ իշխ. Գ. Ս. Գոլիցին սեպտ. 28-ին վերադարձաւ Փանձակից, ուր նա գնացել էր մի քանի օր առաջ։

—

Վեհ հայրապետը կիրակի, սեպտեմ. 27-ին եպիսկոպոս է ձեռնադրել Մովսիսեան, Սաթունեան և Զիրակունի վարդապետներին։

—

Հոկտ. 4-ին Թիֆլիսում կըրացւի այգեգործական ցուցահանդես, որի համար Մուշտայիդում առանձին շինութիւն է կառուցանւում։ Ցուցահանդէսը շատ հետաքրքիր է լինելու։

—

Քաղաքիս փողոցները ելէքտրականութեամբ լուսաւորելու համար ընտրուած յանձնաժողովը այս օրերս կվերջացնէ իր աշխատութիւնները, որոնք վերաբերում են փողոցները լուսաւորելու համար առաջարկած գներին և երկուշաբթի, հոկտ. 6-ին իր կարծիքը կըներկայացնէ քաղաքային վարչութեան։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը սեպտ. 28-ի նիստում ընտրեց մի յատուկ յանձնաժողով, որ պէտք է ձիաքաշն ընդունելու պատրաստութիւն տեսնի և ձիաքաշի տնտեսական մասը կազմակերպէ բելգիական ընկերութիւնից գնելուց յետոյ։

—

Մշակին հաղորդում են, որ Ախէնի պոլիտեխնիկումի մէջ պիտի կախւի պրոֆէսոր Ենդրէաս Արծրունու մեծադիր պատկերը, իբրև յարգանք դէպի նրա պրոֆէսորական գործունէութիւնը։

—

Ֆրանսիայում տեղի ունեցած դէպքերը Զոլային վերաբերմամբ, ամբողջ լուսաւոր աշխարհի նողկանքն են շարժում։ Ինչպէս յայտնի է, Զոլան մեղադրել էր Դրէյֆուսի ձեռնադիրները քննող էքսպէրտներին կեղծութեան մէջ։ Վերջիններս դանգատեցին և դատարանը մեղաւոր ճանաչեց Զոլային, ենթարկելով 32,000 ֆրանկ տուգանքի։ Բայց որովհետև Զոլան կարողութիւն չունէր այդ տուգանքը վճարելու՝ նրա շարժական գոյքերը ի վաճառ հանուեցին. և ինչ է, կարծում, մի հրատարակիչ, Ֆասկել անունով, գնեց 32,000 ֆրանկով,—այն է նա վճարեց ամբողջ պարտքը. ծախու դրած առաջին առարկայի—միայն սեղանի համար.

Մթթէ այս բանից չըպէտք է ամաչեն Զոլոյի հակառակորդները...

—

Հոկտեմբեր 1-ին լրացաւ Վ. Ի. Մոզէստովի գիտնական-գրական գործունէութեան քառասուն տարին։ Ներկայումս նա ծանրաբեռնուած է հուսկական հնագոյն ժամանակաշրջանի պատմութեան, ուսումնասիրութեամբ և այդ նպատակով նա գնալու է Հռոմ և մի քանի տարի մնալու այնտեղ։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը նախագիծ էր կազմել ճահճոտ վայրերում ռեֆորմներ մուծելու, և այդ նախագիծը ուղարկել էր բոլոր նահանգապետներին նրանց եզրակացութիւնն իմանալու։ Այժմ, լրագրների ասելով, նահանգապետներից շատերը տեղեկութիւններ են հաղորդել այդ մասին և յոյս են տածում, որ առաջիկայ ձմեռայ ընթացքում կըկազմակերպւի այդ հարցը մանրամասնօրէն ուսումնասիրելու համար առանձին յանձնաժողով։

—

Ղզլարում —ինչպէս շատ անգամ— Տերեկ գետը իր ուղղութիւնը փոխելով, ողողել է քաղաքի այգիները 300 դեսեատին այգիները քարուքանդ կ արել, ժողովրդին թողնելով անելանելի դրութեան մէջ։

—

Քաղաքային վարչութիւնը մտադիր լինելով հրդեհաշէջների խումբը աւելի լաւ կազմակերպել, դիմեց տեղեկութիւնների այդ հարցի մասին Պետերբուրգ, Մոսկա, Օդեսսա և Ռուսիայի աւելի խոշոր կենդրոններ։

—

Զոլան դեռ և այս Պարիզ չէ վերադարձել. մինչև Դրէյֆուսի գործի վերաքննութիւնը կըմնայ արտասահմանում։ Այժմ նա զբաղած է մի նոր գրքի հեղինակութեամբ, որ երևի կանուանւի «Les quatre Evangiles»։ Դրէյֆուսի գործը վերաքննելուց յետոյ կըգրի այդ գործին նուիրուած մի գիրք, որի մէջ պատմած կըլինեն շատ հետաքրքիր բաներ։

—

Արտասահմանից վերադարձաւ Թիֆլիսի նահկին ճանճագապես բարձրագոյն Դուռ սենեկապես իշխան Գ. Դ. Ջերւաշիձէ։

—

„Ռուս. հեռ. գործակալութիւնը“ Թռստով (Դոնի վրայ) հաղորդից սեպտ. 29-ից ենթադրում կարեւոր լուրն է հաղորդում. „Նոր-Նախիջեւանում կայացաւ հայոց եկեղեցիների ծրխականների ընդհանուր ժողով, որ նուիրուած էր համար եկեղեցական հոգաբարձութեան 1896 և

1897 թականների հաշիւները, նաեւ այն յատուկ հաշիւը, որ հոգաբարձութեան ձեռքով ընծած տան համար է եղել, որի վրայ ծախսած է աւելի քան 300,000 ռուբլի բարեգործական գումարներից։ Ժողովը չընդունեց 1896 եւ 1897 թականների հաշիւները եւ միաձայն որոշեց ընդունել Տագանրոգի դատարանի պրոկուրորին, խրնդրելով ինքնուրեն սկսել"։

Մեր ընթերցողներն արդէն ծանօթ են այս գործի մանրամասնութեան հետ։ Հատնականապէս, որ ոս Նոր-Նախիջեւանի բաղաքագլուխ Մ. Պալապանեանին է վերաբերում, որից (հոգաբարձութեան լիազօր պ. Պալապանեանն է) ծխականները մանրամասն հաշիւ են պահանջում։

Թիֆլիսում տարածւած է ծաղիկ հիւանդութիւնը, մանաւանդ հետզհետէ շատանում է 6 և 7-րդ քաղաքամասերում։ Այդ ի նկատի ունենալով, եռանդուն միջոցներ են ձեռք առնւած ծաղկի տարածման դէմն առնելու։

ԱՆՆՊԱՐԱՀՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Առաջիկայ տարուց Սէ Ծովի և Իսկհամայլի (Շաւրնիայլի մայրաքաղաքը) մէջ շոգենաւային կանոնաւոր հաղորդակցութիւն է բացւելու, Մուսթայից գլխաւորապէս նաւթ արտահանելու համար։

—Պետերբուրգում կըկայանայ երկաթուղիական ակցիօներական ընկերութիւնների ընդհանուր ժողով։ Ժողովին կըներկայացւի մի ծրագիր բոլոր երկաթուղիների վրայ ծառայողներին ապահովագրելու մասին, այն դէպքում, երբ վերջիններս կըծերանան կամ կըմեռնեն գործի ժամանակ։

Խառն լուրեր

Սուլթանը շատ է աշխատում գերմանական կայսրին դուր գալու։ Նա կամենում է 50 հազարից բաղկացած զօրախաղ սարքել, որին կըմասնակցեն գանազան զօրքեր։

—Կրէտէի թիւրք զօրքերի հրամանատար Ջէւադ-փաշային, որ կարճ ժամանակում յայտնի եղաւ պետութիւններին իր չամառութեամբ, սուլթանը հրամայեց ուղեկցել Վիչհելմ կայսրին իր ուղեգնացութեան ժամանակ Սիրիայում։ Ջէւադ-փաշան գնաց Բէյրութ։ Կրէտէի զօրքերին այժմ կըղեկավարէ հայերիս լաւ յայտնի Զաքիր փաշան։

—Պետութիւնները Կրէտէի համար ուզում են վերջապէս մի բան անել, դրա համար էլ ք. Դրանը մի ծանուցագիր են ներկայացրել, որի պատասխանելու ութ օր ժամանակ է տւած։ Եթէ ութ օրւայ ընթացքում չըպատասխանէ կամ թիւրքաց զօրքերի յետ կանչելուն համաձայնութիւն չըտայ՝ դա կըհամարւի մերժումն։

—Ֆրանսիայում Պիկարի համար այնպիսի ձևով ագիտացիա են սկսել նրան բանտից ազատելու համար, որ վինորական շրջաններում խռովութիւն է սպասւում։ Ռոլորն էլ Յուրլինդէնի (սա է բանտարկել տւել Պիկարին) վարմունքը օրէնքի դէմ են համարում և պահանջում են նրան հեռացնել Պարիզի նահանգապետի պաշտօնից։

—Երկիւղ կըլինի, որ Չինաստանում կարող են լուրջ խռովութիւններ տեղի ունենալ, եւրոպական բոլոր տէրութիւնները զօրաբաժիններ և նաւեր են ուղարկում դէպի Պէկին։ Դրանց հետևում են և Ամերիկան ու Եապոնիան։

Նոյն կերպ վարւում են և Կրէտէի վերաբերմամբ։ Այս բոլորը տեսնելով՝ չի կարելի քաղաքական աշխարհի հորիզոնը պարզ համարել։

—Մինչև այժմ որոշ յայտնի չէ չինական կայսրի ուր լինելը։ Շատերը նրան մեռած են համարում, շատերը կենդանի։ Ցամենայն դէպս դժւար է ճիշտն իմանալ մանաւանդ Չինաստանում, ուր ներկայումս ներքին յեղափոխութիւն է սպասւում։ Եւրոպական տէրութիւններն էլ հենց այդ են ուզում։

—Գերմանական կայսրը կըսկսի իր ճանապարհորդութիւնը Երուսաղէմ հոկտ. 13-ից և մինչև նոյեմբ. 9-ը կ'այցելէ նաև Թիւրքիայի մի քանի քաղաքներ։ Իսկ նոյեմբերի 4-ին կըճանապարհւի դէպի Եգիպտոս։

Այլ եւ այլ

Անգլիական եկեղեցականների ընկերութեան երկու անդամներ՝ պրոֆեսորներ Բէրնարդ Գրենֆէլ եւ Հորիւր Զոնես, Ալեքսանդրիայի շրջակայքում նորերս մի զարմանալի գիւտ են արել։ Նրանք գտել են Անդրեասի մատենադարանի մի մասը, թաղւած աւազի մէջ, որ շատ շատ պահպանւել էր։ Շատ կարեւոր դոկումենտների մէջ է եւ Սաճօ'ի պօեման։ Ժամանակը փչացրել է պապիրուսի (որի վրայ գրւած է պօեման) մի քանի տեղերը, այնպէս որ մի քանի տուներ չի կարդացւում, բայց ի հարկէ, այդ դրութեան մէջ էլ պօեման գրւած ամբողջապէս յոյն նշանաւոր բանաստեղծուհու ձեռքով, մի անգին գանձ է, որ կըսպանի բրիտանական մուզեումի հազւագիւտ իրերի շարքում։

Տեղն է յայտնել, որ անցեալ տարի Տարազի № 27-ում տպագրել ենք այդ բանաստեղծուհուց մի քանի հատւածներ։

ԱՁՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՄԸՆԻ

Մրտւթիւնը կանանց միշտ դառնում է դժւարին համոզում։ *Ջեխսպիր*

Կինը երբեմն համեստութիւնը սիրում է, բայց շատուկաչ խաբում է։ *Դ. Դ. Միլնաեւ*

Երբ տղոմորում են կանայի ինքնասիրութիւնը սիրոյ վերաբերեալ հարցով, այն ժամանակ քէ խելացի եւ քէ յիմար կանայք նմանւում են իրար։ *Ա. Ս. Սուվորին*

Կանայք, երբ սիրում են, ընդհանուր են կլիմայից եւ մարդկանց այնպէս արագ, ինչպէս կատուներ։ *Մես. Զեխով*

Ղողոմորթիւնը կանանց աւելի է վնասում՝ քան սէրը։ *Բաուլս*

Կինը ամենամեծ չարիքն սկզբնապատճառն է, մարդու բարոյական անկման պատճառը։ Նա մի ժամանակ տգամարդուն գայթակղեցրեց եդեմում, այժմ էլ նա շարունակում է գայթակղեցնել, այժմ էլ դէպի դրժոխքի անդունդն է տանում նրան։

Վիկտոր Հիւգօ

Սուրհանդակ

Ախտրախան. Կ. Պ.—Կարող էք գրքերը վերադարձնել։ Մենք կրվերաստուգենք, եթէ ոչ է սխալ։

Ն.-Նախիջեւան. Ատրպետ.—Պ. Յովհ. Թումանեանցից ստացել ենք։ կրտպագրենք։

Շամախի. Ծիկ. Մ. Պ.—Հարեհանեցիք կարդալ մեր *Խմբ. գրատեղեակից*. կրտսեցաք դուք էլ։ Առ հասարակ ուշ ընտարագրողներիդ ուշ է ուղարկում պրէմիան։

Բոլոր պրէմիա չըստացողներին. Կարողացէք վերեւի պատասխանը։

Սարգսար. Ն. Ռ. *Մշակից* բաժանորդագին չենք ստացել. վերաստուգեցէք։ *Ալբիւր-Տարազ* արտասահման արժէ 14 ր.

Բալախանի. Մ. Մ.—Ձեր *Բոդունին* կրտպւի վտիտութեամբ։

Ս. Պետերբուրգ. Ա. Զ.—Ընդունակութիւն. ստացանք։

Նոյն տեղ. Ե. Թ.—*Իշամէջ* կրտպագրենք, իսկ դուք կարող էք օգտել շարւածքից եւ նրա տպագրութիւնը ձեզ վրայ էժան կրնստի։ Ուղարկեցէք *գրական գոյցնների* վերջը։

Ժամանակաւոր խմբագիր՝
Արեսիի Արամխանեան
Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՇԱՐՈՒՆԱԿԻՒՄ Է ԿԻՍԱՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս է տեսնում ՏԱՐԱԶԸ չաբաթական երեք թերթ։

ՏԱՐԱԶԻ 6 ամսեայ բաժանորդագինը (յուլիսից-յունուար 99 թ.) ճանապարհածախսով 3 ր.

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГВЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԱՌԱՋԻՆ ՄԱՆՈՒԱԿՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

(Կուկիա, Վերնոյով տրամի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից

Առաւօտեան

Ե. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժական, վեներական (սիֆիլիս) եւ մկաններ. հ.

Կ. Մ. Շիկովանի—9—10 ժ. ալիք, ներքին ներարկային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. Բուդենկո—10—11½ ժ.: կանանց եւ երեխ.հ. ծաղկի պատուաստումն:

Զ. Ի. Բաբաճանեանց—11½—12 ժ. կ. հ.:

Ի. Ֆ. Պոհասեվիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.

Ա. Պ. Կաւապեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.

Ա. Ֆ. Գուրկո—1½—2½ ժ. ներքին եւ մկաններական հ.

Երեկոյեան

Ա Մ. Փուղինեան—6 ժ. ներքին եւ երեխայոց հ.

Ե. Ա. Նաւասարդեան—6½—7 ժ.

Ա. Ն. Ձպակովսկի—6—7 ժ. ներարկային (ներկարարուժութիւն), վեներ. եւ մորքի հ.

Տ. Ի. Բուդենկո հիւանդանոցում իրմիական եւ խոշորացուցական հետազոտութիւններ ի անուն մկան, խխի, արեան, կաթի եւ այլն:

Վճար 50, կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ **Նաւասարդեան**

ՊՐԻՕԲՐԵՏԱՅՏԵ!

Новѣйшій американскій фонографъ 65 руб.

Columbia Graphophon, 65 руб. Передаетъ и воспринимаетъ рѣчіе, разговоръ, любую музыку, не исключая, конечно, и оркестровой и пр. Передача пріятна, громка и отчетлива, слышать можетъ не только одно лицо, но и нѣсколько лицъ или даже цѣлое общество, не уступаетъ самымъ дорогимъ фонографамъ. Цѣна аппарата (комплектнаго) съ двумя мембранами для записыванія, какъ и передачи, слуховыми трубками, рупоромъ, двумя напѣтыми и двумя гладкими валиками только 65 р. въ дубовомъ футлярѣ. Громадный выборъ интереснѣйшихъ пьесъ.

Заказы въ провинцію высылаются немедленно по полученіи 15 р. задатка.

С.Петербургъ, Складъ Новыхъ изобрѣтеній. Большая Морская, 33. 1—1

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքների երթեւեկութիւն

Կայարաններ	Դուրս է գնում			
	Բագուից-Թիֆլիս		Թիֆլիսից Բագու	
			Բագու հաս.	
Բագու	4.05	12.20	12.59	5.45
Եւլախ	12.15	9.24	4.58	7.56
Պանձակ	2.37	11.54	2.55	5.45
Ախստաֆա	5.32	3.18	11.51	2.00
ԹԻՓԼԻՍ	9.10	7.48	9.05	10.58
Գորի	11.32	10,33	6.18	6.57
Միխայլովո	12.56	12.02	5.00	5.41
	Թիֆլիս է հասնում.			
Բաթում	8.47	8.38	8.20	8.35

Ծանօթ. Սեւ թուանշաններով գիշեր են:

Թիֆլիս հասնում են գնացքները՝ Բաթումից 8 ժ. 22 ր. երեկ. և 9 ժ. 07 ր. առ., Բագուից՝ 8 ժ. 26 ր. առ և 6 ժ. 33ր. երեկ. Թիֆլիսից գնացքը դուրս է գալիս՝ Բաթում 9 ժ. 10 ր. առ. և 7 ժ. 48. եր. Բագու 9 ժ. 05 երեկ. և 10 ժ. 57 ցերեկ.:

Խմբագրութեան գրասենեակից

—

Այն անձինք, որոնք մինչեւ այժմ չեն ստացել Հայրենասէր Իճիգեանէ պրէմիան, շուտով կըստանան: Բաժանորդների անսպասելի շատութեան պատճառով, նորից պատւէր ենք տւել և մինչև տարւայ վերջը կըստանան այն բոլոր բաժանորդներն էլ, որոնք մէկ րուբլի ճանապարհածախք են վճարել:

ԹԸՐՔԻՒ ԽԱՆՈՒԹ

Ոսկէ եւ ադամանդէ առարկաների.

(Գոլովինսկի պրոսպեկտ)

Բացած է *օպտիկ* ապրանքների բաժանմունք, ուր ամենագեղեցիկ **պէնսնէների** եւ **ակցոցների**, շինած *ոսկուց* եւ *կրիայի ոսկրից*: Նոյնպէս պատրաստում են ակնաբոյժի պատւէրների համաձայն՝ զանազան ակնոցներ եւ փչացածները վերանորոգում: Ծախւում են **հեռադիտակներ:**

ՎԱՐԾԱԽՈՒՄ

ԴՐՈՒՆԿԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

ՎԻԼՉԻՆՍԿՈՒ ԵՒ ԸՆԿ.

ամենամեծ գրասենեակը

առաջարկում է

ֆրանսուհի, անգլուհի, գերմանուհի ուսուցչուհիներ և դաստիարակչուհիներ

ՆՈՅՆՊԷՍ

ՉԵՒԱՆՈՑՈՒՀԻՆԵՐ ԵՒ ԹԵՐՉԱՆԿՈՒՀԻՆԵՐ

Դիմել՝ ВАРШАВА, Коммисіонерская контора К. Вильчинскій и К°, № 9, Нецѣлая, № 9. 6—3

ՎԱՐՉԱՒՈՒՄ

Առաջնակարգ փողոցի վրայ

Marszałkowska № 86 m. 8.

Բարեխիղճ գներով տրւում են ամենայն յարմարութիւններով ԿԱՀԱՒՈՐԱՒՄ ՍԵՆԵԿՆԵՐ. խօսում են և եւրոպական լեզուներով: Ճաշը թարմ մթերքից մատչելի գնով: 5—3

Մի անգլիական պատուաւոր ընտանիք **Բերլինում** ընդունում է գիշերօթիկ ուսանողուհիներ և ուսանողներ: Տալիս է վարձու շքաթոռով և ամսով կահաւորուած սենեակներ, ճաշ, նախաճաշ լաւագոյն գներով:

Հասցէն՝ Berlin. 31 Potsdamer Str. 31ᴵᴵ Pension I. Hoeltzl-Sheridan. 2—2

Дозв. ценз. Тифлисъ, 3 октября 1898 г. *Տպարան Կ. Մարտիրոսեանցի* Тип. К. И. Мартиросіанца. Орбел. ул., № 1—2.